

Կ-116՝-25.04.2019,25.09.2019-ՖՎ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում աուդիտորական գործունեության իրականացման հիմունքները և կանոնակարգում աուդիտորական գործունեության հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Օրենքի գործողության ոլորտը

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող աուդիտորական գործունեության վրա: Պետական (հանրային) հատվածում արտաքին աուդիտը կոչվում է հաշվեքննություն և կարգավորվում է «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Ստորև բերված հասկացությունները սույն օրենքում օգտագործվում են հետևյալ իմաստով.

1) աուդիտոր՝ «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ մասնագիտացված կառույցի անդամ հանդիսացող ֆիզիկական անձ, որն ունի աուդիտորի որակավորում.

2) աուդիտորական կազմակերպություն՝ մասնագիտացված կառույցի անդամ հանդիսացող իրավաբանական անձ, որն իրավունք ունի մատուցել աուդիտորական ծառայություններ.

3) աուդիտի ենթարկվող անձ՝ իրավաբանական անձ, հիմնարկ, որին մատուցվում են աուդիտորական ծառայություններ.

4) աուդիտորական ծառայություն՝ աուդիտը և (կամ) աուդիտորական դիտարկումը.

5) աուդիտորական գործունեություն՝ աուդիտը, աուդիտորական դիտարկումը և աուդիտին հարակից ծառայությունները (համաձայնեցված ընթացակարգեր, կոմպիլյացիա)։

6) աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտներ՝ Հաշվապահների միջազգային դաշնության (IFAC) Աուդիտի և հավաստիացման միջազգային ստանդարտների խորհրդի (IAASB) կողմից հրապարակված և «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործողության մեջ դրված հետևյալ միջազգային ստանդարտները։

ա. Որակի հսկողության միջազգային ստանդարտներ (ISQC)։

բ. Աուդիտի միջազգային ստանդարտներ (ISA)։

գ. Դիտարկման առաջադրանքների միջազգային ստանդարտներ (ISRE)։

դ. Հավաստիացման (բացի՝ աուդիտը և դիտարկումը) միջազգային ստանդարտներ (ISAE)։

ե. Հարակից ծառայությունների միջազգային ստանդարտներ (ISRS)։

7) պրոֆեսիոնալ հաշվապահների մասնագիտական էթիկայի կանոնագիրք՝ Հաշվապահների միջազգային դաշնության (IFAC) Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի (IESBA) կողմից հրապարակված և «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործողության մեջ դրված պրոֆեսիոնալ հաշվապահների մասնագիտական էթիկայի կանոնագիրքը (այսուհետ՝ Մասնագիտական էթիկայի կանոնագիրք)՝ համապատասխանեցված սույն օրենքի, ինչպես նաև «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» և «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներին։

8) աուդիտորական կազմակերպությունների, աուդիտորների և փորձագետ հաշվապահների ռեեստր՝ ինչպես սահմանված է «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով։

9) մասնագիտացված կառույց՝ ինչպես սահմանված է «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում։

Հոդված 4. Աուդիտորական գործունեության ոլորտում քաղաքականություն իրականացնող մարմինը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող աուդիտորական գործունեության ոլորտում քաղաքականություն իրականացնող մարմինը (այսուհետ՝ Քաղաքականություն իրականացնող մարմին) Հայաստանի Հանրապետության ֆինանսների

նախարարությունն է՝ համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

Հոդված 5. Աուդիտորական գործունեությունը կարգավորող իրավական ակտերը

1. Աուդիտորական գործունեությունը կարգավորող իրավական ակտերը ներառում են՝
 - 1) սույն օրենքը.
 - 2) «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը.
 - 3) Աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտները.
 - 4) Մասնագիտական էթիկայի կանոնագիրքը.
 - 5) «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված իրավական այլ ակտերը:

Հոդված 6. Աուդիտորական կազմակերպությունը

1. Աուդիտորական կազմակերպությունը ձեռք է բերում աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք այն ամսաթվից, երբ նրա մասին տեղեկությունները գրանցվում են մասնագիտացված կառույցի՝ աուդիտորական կազմակերպությունների, աուդիտորների և փորձագետ հաշվապահների ռեեստրում (այսուհետ՝ Ռեեստր):
2. Կազմակերպությունը, որի մասին տեղեկությունները պետական գրանցման ամսաթվին հաջորդող օրվանից սկսած 60 աշխատանքային օրվա ընթացքում չեն ներառվել Ռեեստրում, չի կարող օգտագործել «աուդիտ», «աուդիտոր», «աուդիտորական» բառերը կամ դրանց ածանցյալներն իր անվանման մեջ:

Հոդված 7. Աուդիտորը

1. Ֆիզիկական անձը ճանաչվում է որպես աուդիտոր այն ամսաթվից, երբ նրա մասին տեղեկությունները գրանցվում են Ռեեստրում:
2. Աուդիտորները պարտավոր են պահպանել Մասնագիտական էթիկայի կանոնագրքի պահանջները:

Հոդված 8. Փոխկապակցված անձինք

1. Սույն օրենքի իմաստով, իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե՝

1) նրանցից մեկը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի, բաժնեմասերի, փայերի և մասնակցությունը հավաստող այլ արժեթղթերի (այսուհետ՝ բաժնետոմս) 20 և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի մասնակցել մյուսի որոշումների կայացմանը.

2) նրանցից մեկի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 20 տոկոսից ավելին տիրապետող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումների կայացմանը մասնակցելու հնարավորություն ունեցող մասնակիցները (բաժնետերերը) կամ նրանց ընտանիքի անդամներն իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետել (այդ թվում՝ առուվաճառքի, հավատարմագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրերի, հանձնարարության կամ այլ գործարքների հիման վրա) մյուս անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 20 տոկոսից ավելին կամ ունեն օրենքով չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն.

3) նրանցից մեկի խորհրդի նախագահը, խորհրդի անդամը, վարչության նախագահը, վարչության անդամը, գործադիր տնօրենը, ֆինանսական կառավարման գծով նրա տեղակալը, ֆինանսական ստորաբաժանման ղեկավարը, գլխավոր հաշվապահը կամ հաշվապահական հաշվառման վարման կամ ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու անձը, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը կամ ներքին աուդիտի համար պատասխանատու անձը, վերստուգիչ հանձնաժողովի նախագահը, վերստուգիչ հանձնաժողովի անդամը կամ նման այլ մարմինների անդամը (այսուհետ՝ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ), ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը միաժամանակ հանդիսանում է մյուս անձի որևէ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ:

2.Սույն օրենքի իմաստով, ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք միևնույն ընտանիքի անդամ են կամ վարում են ընդհանուր տնտեսություն կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն:

3. Սույն օրենքի իմաստով, ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

1) տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի 20 տոկոսից ավելին տնօրինող մասնակից.

2) օրենքով չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումների կայացմանը մասնակցելու հնարավորություն ունեցող անձ.

3) տվյալ իրավաբանական անձի կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ:

4. Սույն օրենքի իմաստով, միևնույն ընտանիքի անդամ են համարվում երեխան, ամուսինը, ծնողը, քույրը, եղբայրը, պապը, տատը, թոռը, քրոջ, եղբոր ամուսինն ու երեխաները, ինչպես նաև ամուսնու երեխան, ծնողը, քույրը, եղբայրը, պապը, տատը, թոռը:

Գ Լ ՈՒ Խ 2

ԱՌՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌՒԴԻՏԸ

Հոդված 9. Աուդիտորական գործունեությունը

1. Աուդիտորական գործունեությունն իրականացվում է աուդիտորական գործունեությունը կարգավորող իրավական ակտերով սահմանված կարգով:

2. Աուդիտը և աուդիտորական դիտարկումը աուդիտորական կազմակերպությանը հնարավորություն են ընձեռում տեղեկատվության արժանահավատության վերաբերյալ ապահովելու հավաստիացում, իսկ համաձայնեցված ընթացակարգերը և կոմպիլյացիան այդպիսի հավաստիացում չեն նախատեսում:

3. Աուդիտորական ծառայությունները պետք է իրականացվեն առնվազն մեկ աուդիտորի կողմից:

Հոդված 10. Աուդիտը

1. Աուդիտը աուդիտի ենթարկվող անձի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկատվության ստուգումն է՝ այդ տեղեկատվության արժանահավատության վերաբերյալ անկախ կարծիք արտահայտելու նպատակով, որն իրականացվում է աուդիտորական եզրակացություն տրամադրելու միջոցով:

2. Աուդիտն անցկացվում է օրենքով սահմանված դեպքերում (պարտադիր աուդիտ) կամ կամավոր (կամավոր աուդիտ): Ինչպես պարտադիր, այնպես էլ կամավոր աուդիտն իրականացվում է աուդիտորական գործունեությունը կարգավորող իրավական ակտերով սահմանված կարգով: Կամավոր աուդիտը կարող է իրականացվել այլ հիմունքներով (աուդիտի այլ ստանդարտներով և այլն):

3. Պարտադիր աուդիտի ենթարկվող անձի ֆինանսական հաշվետվությունները Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններն են: Կամավոր աուդիտի ենթարկվող անձի ֆինանսական հաշվետվությունները կարող են պատրաստված լինել ինչպես Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի համաձայն, այնպես էլ այլ հիմունքներով:

Հոդված 11. Աուդիտորական դիտարկումը

1. Ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական դիտարկումն այնպիսի ընթացակարգերի իրականացում է, որը հնարավորություն է ընձեռում աուդիտորին՝ պարզելու, թե արդյոք առկա են այնպիսի փաստեր, որոնք կարող են վկայել այն մասին, որ ֆինանսական

հաշվետվությունները, բոլոր էական առումներով, կազմված չեն հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերին համապատասխան:

Հոդված 12. Համաձայնեցված ընթացակարգերը

1. Համաձայնեցված ընթացակարգերն աուդիտորական բնույթի այնպիսի ընթացակարգեր են, որոնց շուրջ համաձայնության են գալիս այդ ընթացակարգերն իրականացնող անձը, իրավաբանական անձը (հիմնարկը կամ անհատ ձեռնարկատերը), անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան երրորդ անձը կամ անձինք, և որոնց արդյունքում այդ ընթացակարգերն իրականացնող անձի կողմից ներկայացված հաշվետվության հիման վրա այդ հաշվետվությունն օգտագործողները կարող են կատարել եզրահանգումներ:

Հոդված 13. Կոմպիլյացիան

1. Կոմպիլյացիան ֆինանսական տեղեկատվության հավաքումը, դասակարգումը և ամփոփումն է՝ այն օգտագործելու համար առավել հասկանալի և հարմար տեսքի բերելու նպատակով:

Հոդված 14. Աուդիտորական կազմակերպության աշխատանքի ձևերը և մեթոդները

1. Աուդիտորական կազմակերպությունն ինքնուրույն է ընտրում իր աշխատանքի ձևերն ու մեթոդները՝ ելնելով աուդիտորական գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջներից:

Հոդված 15. Աուդիտորի, աուդիտորական կազմակերպության գործունեության սահմանափակումները

1. Աուդիտորական կազմակերպությանը, բացի աուդիտորական գործունեությունից և սույն հոդվածի 2-րդ մասում նշված ծառայությունների մատուցումից, արգելվում է որևէ այլ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը, բացառությամբ այնպիսի գործունեությունից, որի արդյունքում աուդիտորական կազմակերպությունը ստանում է Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքով սահմանված պասիվ եկամուտներ:

2. Աուդիտորական կազմակերպությունը կարող է մատուցել նաև հետևյալ ծառայությունները.

1) հաշվապահական հաշվառման ներդրում, վերականգնում և վարում, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների պատրաստում.

2) հաշվապահական հաշվառման, հարկերի, տնտեսագիտության, ֆինանսների և աուդիտի գծով ուսուցանում.

3) ակտիվների, այդ թվում՝ ֆինանսական գործիքների և (կամ) պարտավորությունների գույքագրում և գնահատում.

4) հարկերի, տուրքերի և պարտադիր այլ վճարների պլանավորում ու հաշվարկում.

5) կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն.

6) հաշվապահական, տնտեսագիտական, ֆինանսական, հարկային, կառավարչական և իրավաբանական խորհրդատվություն.

7) ներդրումային ծրագրերի մշակում և վերլուծություն, գործարար (բիզնես) պլանի կազմում.

8) հաշվապահական հաշվառմանը, աուդիտորական գործունեությանը, ֆինանսներին, տնտեսագիտությանը, հարկերին, տուրքերին և այլ պարտադիր վճարներին առնչվող գործունեության հետ կապված մասնագիտական փորձաքննության իրականացում.

9) մասնագիտական գրականության հրատարակում.

10) հարկային հաշվառման ներդրում, վերականգնում և վարում, հարկային հաշվարկների և հաշվետվությունների պատրաստում.

11) ներքին աուդիտի ծառայություն:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված ծառայությունների առանձին տեսակների մատուցման համար օրենքով հատուկ թույլտվություն (լիցենզիա) պահանջվելու դեպքում աուդիտորական կազմակերպությունը գործունեության այդ տեսակներով զբաղվելու համար պարտավոր է սահմանված կարգով ստանալ համապատասխան թույլտվություն (լիցենզիա):

4. Աուդիտորական կազմակերպությունը իրավունք չունի իր կողմից աուդիտի ենթարկվող անձին մատուցել սույն հոդվածի 2-րդ մասում նշված ծառայությունները, եթե՝

1) նշված ծառայությունների իրականացումը կհանգեցնի աուդիտորական կազմակերպության անկախության նկատմամբ պահանջների չպահպանմանը կամ կառաջացնի այդպիսի պահանջների չպահպանման վտանգ և (կամ) կհանգեցնի շահերի բախման առաջացմանը կամ այդպիսի բախման առաջացման վտանգի, և

2) աուդիտորական կազմակերպությունը չի կարող ընդունել համապատասխան միջոցներ՝ վերացնելու համար աուդիտորական կազմակերպության անկախության նկատմամբ պահանջների չպահպանման վտանգը կամ իջեցնելու համար վտանգը մինչև այն մակարդակ, որի դեպքում Մասնագիտական էթիկայի կանոնագրքով սահմանված մասնագիտական էթիկայի հիմնական սկզբունքները (աուդիտորական ծառայությունների մասով) կպահպանվեն:

5. Աուդիտորական ծառայություն չի կարող մատուցել կամ աուդիտորական ծառայության մատուցմանը չի կարող մասնակցել՝

1) այն աուդիտորը կամ աուդիտորական կազմակերպությունը, որը հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի ապահովադիրը (բացառությամբ պարտադիր ապահովագրության տեսակների).

2) այն աուդիտորական կազմակերպությունը, որի կառավարման մարմնի անդամներից կամ նման պարտականություններ կատարող այլ անձանցից, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից

որևէ մեկը հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի ապահովագրիչը (բացառությամբ պարտադիր ապահովագրության տեսակների)։

3) այն աուդիտորական կազմակերպությունը, որի կառավարման մարմնի անդամներից կամ նման պարտականություններ կատարող այլ անձանցից, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը հանդիսանում է տվյալ իրավաբանական անձին փոխկապակցված անձ։

4) աուդիտորը՝ իրեն փոխկապակցված անձանց մոտ։

5) աուդիտորական կազմակերպությունը՝ իրեն փոխկապակցված անձանց մոտ։

6) աուդիտորը կամ աուդիտորական կազմակերպությունը՝ Աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտներով և (կամ) Մասնագիտական էթիկայի կանոնագրքով նախատեսված այլ դեպքերում։

Հոդված 16. Աուդիտի և հարակից ծառայությունների փաստաթղթավորումը

1. Աուդիտի և հարակից ծառայությունների իրականացումը պարտադիր փաստաթղթավորվում է աուդիտորական կազմակերպության կողմից՝ Աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտներով և Մասնագիտական էթիկայի կանոնագրքով սահմանված կարգով։ Սույն օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված աուդիտորական ծառայության որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատումներ իրականացնող անձանց պահանջով աուդիտորական կազմակերպությունը պարտավոր է հնգօրյա ժամկետում տրամադրել արտաքին գնահատում իրականացնելու համար անհրաժեշտ օտարալեզու փաստաթղթերի հայերեն թարգմանված տարբերակները։

2. Աուդիտի փաստաթղթավորումը նախատեսում է աուդիտորի աշխատանքային փաստաթղթերի և աուդիտի արդյունքների հիման վրա աուդիտորական եզրակացության կազմումը։ Պայմանագրով նախատեսված դեպքերում կամ աուդիտորական կազմակերպության նախաձեռնությամբ կազմվում է նաև ղեկավարությանն ուղղված հաշվետվություն (նամակ ղեկավարությանը)։

3. Աուդիտորի աշխատանքային փաստաթղթերն աուդիտի անցկացման նպատակով աուդիտորի կողմից պատրաստվող կամ ձեռք բերվող և պահպանվող փաստաթղթերն են։

4. Աուդիտորական եզրակացությունները, ղեկավարությանն ուղղված հաշվետվությունները, աուդիտորի աշխատանքային փաստաթղթերը և աուդիտի անցկացման հետ կապված այլ փաստաթղթերը պահպանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, բայց ոչ պակաս, քան աուդիտի անցկացմանը հաջորդող հինգ տարիների ընթացքում։

Հոդված 17. Աուդիտորական եզրակացությունը

1. Աուդիտորական եզրակացությունն աուդիտորական կազմակերպության կողմից կազմված փաստաթուղթ է, որում արտահայտվում է կարծիք՝ աուդիտի ենթարկվող անձի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Աուդիտորական եզրակացության ձևին, բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանվում են Աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտներով և Մասնագիտական էթիկայի կանոնագրքով:

2. Աուդիտորական եզրակացությունը կազմվում է առնվազն երկու օրինակից, ստորագրվում է աուդիտի անցկացման համար պատասխանատու աուդիտորի կողմից և հաստատվում է աուդիտորական կազմակերպության ղեկավարի ստորագրությամբ: Աուդիտորական եզրակացության մեկ օրինակը տրվում է աուդիտի ենթարկվող անձին, իսկ մյուսը մնում է աուդիտորական կազմակերպության մոտ:

Հոդված 18. Ոչ հավաստի աուդիտորական եզրակացությունը

1. Սույն օրենքի իմաստով, ոչ հավաստի աուդիտորական եզրակացությունն այն աուդիտորական եզրակացությունն է, որը կազմվել է առանց Աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտներին և (կամ) Մասնագիտական էթիկայի կանոնագրքին համապատասխան աուդիտ անցկացնելու:

2. Աուդիտորական եզրակացությունը ոչ հավաստի է ճանաչվում մասնագիտացված կառույցի որոշմամբ: Մասնագիտացված կառույցի որոշումը կարող է բողոքարկվել Հանրային վերահսկողության խորհրդին:

Հոդված 19. Ղեկավարությանն ուղղված հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը)

1. Ղեկավարությանն ուղղված հաշվետվությունը աուդիտորական կազմակերպության և աուդիտի ենթարկվող կազմակերպության միջև կնքված պայմանագրով նախատեսված դեպքերում աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտների համաձայն պատրաստվող փաստաթուղթ է, որում կարող են ներառվել տեղեկություններ աուդիտի ընթացքի, հայտնաբերված սխալների և թերությունների, հաշվապահական հաշվառման վարմանն ու ֆինանսական հաշվետվությունների պատրաստմանը ներկայացվող պահանջների խախտումների, առանձին հարցերի գծով վերլուծության արդյունքների, պայմանագրով նախատեսված և այլ հարցերի մասին, ինչպես նաև առաջարկություններ սխալների և թերությունների վերացման ուղղությամբ: Աուդիտի ենթարկվող անձի կամ աուդիտորի ցանկությամբ կարող են ընդգրկվել նաև այլ տեղեկություններ:

Հոդված 20. Աուդիտորական գաղտնիքը

1. Աուդիտորական գաղտնիքը աուդիտորական գործունեության ընթացքում աուդիտորական կազմակերպության կամ նրա աշխատողների կողմից ստացված տեղեկություններն են, ինչպես նաև պատրաստված կամ ձեռք բերված փաստաթղթերը, բացառությամբ աուդիտորական եզրակացության և աուդիտորական դիտարկման վերաբերյալ եզրակացության:

2. Աուդիտորական գաղտնիքը ենթակա չէ հրապարակման, բացառությամբ՝

1) երբ հրապարակումը թույլատրված է աուդիտորական գործունեության ծառայությունները ստացող կազմակերպության կողմից,

2) օրենքով սահմանված դեպքերում:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտումն առաջացնում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:

Հոդված 21. Աուդիտորական ծառայության որակի հսկողությունը և դրա արտաքին գնահատումը

1. Աուդիտորական կազմակերպությունը պարտավոր է սահմանել աուդիտորական ծառայության որակի հսկողության կանոններ և պահպանել այդ կանոնները: Աուդիտորական ծառայության որակի հսկողության իրականացման սկզբունքները և նշված հսկողության կազմակերպման նկատմամբ պահանջները սահմանված են Աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտներով և Մասնագիտական էթիկայի կանոնագրքով:

2. Աուդիտորական կազմակերպությունը և աուդիտորը ենթակա են աուդիտորական ծառայության որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման: Նշված անձինք պարտավոր են արտաքին գնահատողին ներկայացնել գնահատման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը և տեղեկությունները:

3. Աուդիտորական ծառայության որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման առարկա է հանդիսանում աուդիտորական կազմակերպության և (կամ) աուդիտորի կողմից սույն օրենքի, «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտների և Մասնագիտական էթիկայի կանոնագրքի պահանջների պահպանման նկատմամբ հսկողությունը:

4. Աուդիտորական ծառայության որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատումն իրականացվում է այն մասնագիտացված կառույցի կողմից, ում անդամ է հանդիսանում աուդիտորական կազմակերպությունը և (կամ) աուդիտորը:

5. Աուդիտորական կազմակերպությունների աուդիտորական ծառայության որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատում, անհրաժեշտության դեպքում, կարող է իրականացվել նաև Հանրային վերահսկողության խորհրդի կողմից:

6. Աուդիտորական ծառայության որակի հսկողության պահանջների պահպանման պլանային արտաքին գնահատումները պետք է իրականացվեն ոչ հաճախ, քան տարին մեկ անգամ և ոչ ուշ, քան երեք տարին մեկ անգամ:

7. Աուդիտորական ծառայության որակի հսկողության պահանջների պահպանման ոչ պլանային արտաքին գնահատումների իրականացման համար հիմք կարող են հանդիսանալ սույն օրենքի և «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների, Աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտների և Մասնագիտական էթիկայի կանոնագրքի հնարավոր խախտումների վերաբերյալ մասնագիտացված կառույցի կամ Հանրային վերահսկողության խորհրդի կողմից ստացված տեղեկությունները:

Գ Լ ՈՒ Խ 3

ԱՌՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌՒԴԻՏԻ ԵՆԹԱՐԿՎՈՂ ԱՆՁԸ

Հոդված 22. Աուդիտորական կազմակերպության իրավունքները և պարտականությունները

1. Աուդիտորական կազմակերպությունն իրավունք ունի՝

1) ինքնուրույն որոշել աուդիտորական ծառայությունների իրականացման ձևերը և մեթոդները՝ Աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտների և Մասնագիտական էթիկայի կանոնագրքի հիման վրա, ինչպես նաև աուդիտորական ծառայությունները իրականացնող խմբի քանակական և անհատական կազմը.

2) աուդիտորական ծառայությունների իրականացման ընթացքում լրիվ ծավալով ուսումնասիրել աուդիտի ենթարկվող անձի ֆինանսատնտեսական գործունեությանն առնչվող փաստաթղթերը, ինչպես նաև ստուգել փաստաթղթերում հաշվառված գույքի փաստացի առկայությունը.

3) աուդիտի ենթարկվող անձից ստանալ աուդիտորական ծառայությունների իրականացման ընթացքում ծագած հարցերի վերաբերյալ բանավոր, գրավոր բացատրություններ և այլ անհրաժեշտ տեղեկություններ, ինչպես նաև պահանջել այդպիսի տեղեկությունների ստացումը երրորդ անձանցից.

4) աուդիտի ենթարկվող անձի գիտությամբ գրավոր հարցում անել և ստանալ երրորդ անձանցից անհրաժեշտ տեղեկատվություն կամ հավաստումներ.

5) աուդիտորական ծառայությունների իրականացման աշխատանքներում ներգրավել այլ աուդիտորների, մասնագետների (այդ թվում՝ պայմանագրային հիմունքներով), ինչպես նաև այլ առևտրային կազմակերպությունների: Աուդիտորական ծառայությունների իրականացման աշխատանքներում նշված անձանց ներգրավման կարգը նախատեսվում է Աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտներով և Մասնագիտական էթիկայի կանոնագրքով.

6) սույն օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կամ 2-րդ կետերով սահմանված պահանջների խախտման դեպքում հրաժարվել աուդիտորական ծառայությունների իրականացումից,

7) իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ գործողություններ:

2. Աուդիտորական կազմակերպությունը պարտավոր է՝

1) աուդիտորական գործունեության իրականացման ընթացքում պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները.

2) աուդիտի ենթարկվող անձի պահանջով ներկայացնել աուդիտորական կազմակերպության կողմից աուդիտի ենթարկվող անձին ներկայացված դիտողությունների և եզրահանգումների հիմնավորումները.

3) ապահովել իր աշխատող աուդիտորների, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում նշված անձանց կողմից սույն օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի պահանջների պահպանումը.

4) սույն օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով սահմանված պայմանների առկայության դեպքում հրաժարվել աուդիտորական ծառայություններ իրականացնելուց.

5) ապահովել աուդիտորական գործունեության իրականացման ընթացքում ստացված աուդիտորական, ծառայողական, առևտրային, բանկային, ապահովագրական կամ կենսաթոշակային գաղտնիք կազմող տեղեկությունների գաղտնիության պահպանումը: Գաղտնի տեղեկությունների ցանկը սահմանվում է օրենքով, աուդիտորական գործունեության իրականացման մասին պայմանագրով և ենթակա չէ հրապարակման, բացառությամբ օրենքով կամ պայմանագրով սահմանված դեպքերի, ինչպես նաև այն իրավաբանական անձի կամ հիմնարկի գրավոր համաձայնությամբ, որի մոտ իրականացվել է աուդիտորական գործունեությունը: Այդ ցանկում չեն ներառվում այն տեղեկությունները, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չեն կարող լինել աուդիտորական, ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք.

6) «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերի պահանջներից որևէ մեկը խախտվելու դեպքում խախտում թույլ տրվելու օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր հայտնել մասնագիտացված կառույցին.

7) մասնագիտացված կառույցի սահմանած կարգով, ժամկետներում և պարբերականությամբ նրան ներկայացնել աուդիտորական գործունեությանը վերաբերող հաշվետվություններ.

8) ապահովել պայմաններ մասնագիտացված կառույցի, Հանրային վերահսկողության խորհրդի համապատասխան աշխատակիցների, այդ թվում՝ մասնագիտացված կառույցի և Հանրային վերահսկողության խորհրդի կողմից ներգրավված մասնագետների համար՝ սույն օրենքով և «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված աուդիտորական

ծառայության որակի հսկողության պահանջների պահպանման նկատմամբ արտաքին գնահատումն իրականացնելու համար.

9) ունենալ ինտերնետային կայք, որում մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 30-ը ներառյալ պարտավոր է տեղադրել և առնվազն երեք տարի ժամկետով պահպանել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունները և աուդիտի ենթարկված անձանց ցանկը.

10) «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված և առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունը տրամադրել այդ օրենքով սահմանված լիազոր մարմնին փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ կասկածի կամ լիազոր մարմնի հարցման հիման վրա՝ այդ օրենքով սահմանված դեպքերում և կարգով.

11) կրել «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ օրենքներով նախատեսված պարտականությունները:

Հոդված 23. Աուդիտի ենթարկվող անձի իրավունքները և պարտականությունները

1. Աուդիտի ենթարկվող անձն իրավունք ունի՝

1) ինքնուրույն ընտրել աուդիտորական կազմակերպությանը, եթե օրենքով կամ պայմանագրով այլ բան սահմանված չէ.

2) աուդիտորական կազմակերպությունից պահանջել և ստանալ ներկայացված դիտողությունների և եզրահանգումների հիմնավորումները.

3) աուդիտորական կազմակերպությունից ստանալ աուդիտորական եզրակացությունը՝ աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրում նշված ժամկետում.

4) աուդիտորական կազմակերպությունից ստանալ աուդիտորական գործունեությունը կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ տեղեկատվություն.

5) մասնագիտացված կառույցին և Հանրային վերահսկողության խորհրդին տեղեկացնել աուդիտորական կազմակերպության կողմից աուդիտորական գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման մասին.

6) իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ գործողություններ:

2. Աուդիտի ենթարկվող անձը պարտավոր է՝

1) օժանդակել աուդիտորական կազմակերպությանը ժամանակին և ամբողջական աուդիտորական ծառայությունների իրականացմանը, աուդիտորական ծառայությունների իրականացման համար տրամադրել անհրաժեշտ փաստաթղթեր, աուդիտորների բանավոր և գրավոր հարցումներին տալ պարզաբանումներ և բացատրություններ՝ աուդիտորներին նախընտրելի եղանակով (բանավոր կամ գրավոր), ինչպես նաև աուդիտորի առաջարկությամբ, իր իրավասության

սահմաններում, երրորդ անձանցից պահանջել աուդիտորական ծառայությունների իրականացման համար անհրաժեշտ տեղեկություններ.

2) չձեռնարկել աուդիտորական ծառայությունների իրականացման ընթացքում ուսումնասիրվող հարցերի շրջանակները սահմանափակող որևէ միջոց.

3) ժամանակին վճարել աուդիտորական կազմակերպության ծառայությունների դիմաց՝ աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրին համապատասխան.

4) կրել օրենքով նախատեսված այլ պարտականություններ:

Հոդված 24. Աուդիտորական ծառայությունների վճարը

1. Աուդիտորական ծառայությունների դիմաց վճարի չափը, վճարման կարգը և ձևը որոշվում են կողմերի միջև կնքված պայմանագրով և չեն կարող կախվածության մեջ դրվել աուդիտի ենթարկվող անձի այնպիսի պահանջներից, որոնք կարող են ազդել աուդիտորական ծառայությունների իրականացման արդյունքում տրամադրվող աուդիտորական եզրակացության բովանդակության վրա:

2. Աուդիտորական ծառայությունների վճարի վրա չի կարող ազդել կամ դրա չափի որոշումը չի կարող պայմանավորված լինել լրացուցիչ ծառայություններ տրամադրելու փաստով:

3. Աուդիտորական ծառայությունների վճարը չի կարող հիմնվել որևէ ձևի պայմանականության վրա:

Գ Լ ՈՒ Խ 4

ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Հոդված 25. Աուդիտորների որակավորումը

1. Աուդիտորների որակավորումը սույն օրենքի 27-րդ հոդվածով սահմանված պահանջներին բավարարող՝ աուդիտորի որակավորում ստանալու համար մասնագիտացված կառույցին դիմած ֆիզիկական անձի (այսուհետ՝ դիմող) սույն հոդվածի 2-րդ մասի պահանջներին բավարարման հավաստումն է (այսուհետ՝ որակավորում):

2. Որակավորումը տրվում է մասնագիտացված կառույցի կողմից: Որակավորումը տրվում է այն դիմողին, որը միաժամանակ՝

1) հանձնել է որակավորման քննությունները.

2) որակավորումը ստանալու համար դիմում ներկայացնելու պահին ունի բարձրագույն կրթություն.

3) որակավորումը ստանալու համար դիմում ներկայացնելու պահին ունի աուդիտորական ծառայության իրականացման կամ հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հետ կապված առնվազն երեք տարվա աշխատանքային փորձ:

Ընդ որում, նշված երեք տարվա աշխատանքային փորձից ոչ պակաս, քան մեկ տարվա աշխատանքային փորձը պետք է բաժին ընկնի աուդիտորական կազմակերպությունում՝ աուդիտորական ծառայությանը վերաբերող աշխատանքին: Աշխատանքային փորձին վերաբերող պահանջները սահմանվում են մասնագիտացված կառույցի կողմից՝ համաձայնեցնելով Հանրային վերահսկողության խորհրդի հետ:

3. Որակավորման քննությունների ծրագիրը (այդ թվում քննական առարկաների կազմը) և քննությունների անցկացման կարգը հաստատում է մասնագիտացված կառույցը՝ համաձայնեցնելով Հանրային վերահսկողության խորհրդի հետ: Որակավորման քննությունները կազմակերպվում և անցկացվում են մասնագիտացված կառույցի կողմից:

4. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջը համարվում է բավարարված դիմողի կողմից քննական բոլոր առարկաների գծով քննությունները հանձնելու դեպքում: Մասնագիտացված կառույցի կողմից սահմանված և Հանրային վերահսկողության խորհրդի հետ համաձայնեցված որակավորման քննություններից ազատման կարգի համաձայն՝ դիմողը կարող է ազատվել որոշակի առարկաների գծով քննություններ հանձնելուց:

5. Որակավորում չտալու վերաբերյալ որոշում կայացվում է այն դեպքում, երբ դիմողը չի համապատասխանում սույն հոդվածի 2-րդ մասի պահանջներին:

6. Աուդիտորը պարտավոր է որակավորումը ստանալու տարվան հաջորդող տարվանից սկսած՝ անցնել շարունակական մասնագիտական զարգացում, որի նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանում է մասնագիտացված կառույցը՝ համաձայնեցնելով Հանրային վերահսկողության խորհրդի հետ: Շարունակական մասնագիտական զարգացման տևողությունը յուրաքանչյուր օրացուցային տարվա համար չպետք է պակաս լինի 20 ժամից, իսկ յուրաքանչյուր երկու հաջորդական տարիների համար՝ 80 ժամից:

7. Սույն հոդվածի համաձայն որակավորում ստացած դիմողին մասնագիտացված կառույցի կողմից տրվում է որակավորման վկայական: Որակավորման վկայականի ձևը և տրման կարգը սահմանում է մասնագիտացված կառույցը՝ համաձայնեցնելով Հանրային վերահսկողության խորհրդի հետ:

Հոդված 26. Աուդիտորների որակավորման քննությունների կազմակերպումը

1. Աուդիտորների որակավորման քննություններն անցկացնում է մասնագիտացված կառույցի կողմից ստեղծված աուդիտորների որակավորման հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով), որի անհատական կազմը և կանոնադրությունը հաստատում է մասնագիտացված կառույցը: Հանձնաժողովի կանոնադրությունը համաձայնեցվում է Հանրային վերահսկողության խորհրդի հետ:

2. Որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման հետ կապված ծախսերը փոխհատուցելու նպատակով մասնագիտացված կառույցը գանձում է վճար: Վճարի չափը սահմանում է մասնագիտացված կառույցը՝ համաձայնեցնելով Հանրային վերահսկողության խորհրդի հետ:

Հոդված 27. Դիմողին ներկայացվող պահանջները

1. Աուդիտորների որակավորման քննությանը կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող այլ անձինք, ովքեր ունեն միջնակարգ կրթություն:

2. Աուդիտորների որակավորման քննություններին մասնակցել չի թույլատրվում այն անձին, ով՝

1) դատարանի վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատարանի վճռով զրկվել է ֆինանսատնտեսական հարաբերությունների իրականացման բնագավառում որևէ պաշտոն զբաղեցնելու իրավունքից, բացառությամբ, եթե դատվածությունը հանված կամ մարված է:

Հոդված 28. Որակավորման ժամկետը

1. Որակավորումը տրվում է անժամկետ:

Հոդված 29. Որակավորման չեղարկման հիմքերը և կարգը

1. Որակավորումը չեղարկվում է այն դեպքերում, երբ՝

1) որակավորումը ստացվել է սույն օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասով և 27-րդ հոդվածով դիմողին ներկայացված պահանջների խախտմամբ.

2) ուժի մեջ է մտել դատարանի վճիռը, որը որպես պատիժ նախատեսում է որոշակի ժամկետով աուդիտորական գործունեության իրականացման իրավունքից զրկում.

3) չի պահպանվել սույն օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի և 20-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները.

4) աուդիտորի կողմից ստորագրվել է աուդիտորական եզրակացություն, որը ճանաչվել է ոչ հավաստի.

5) չեն պահպանվել սույն օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները՝ կապված շարունակական մասնագիտական զարգացման հետ, բացառությամբ այն դեպքերի, որոնք հարգելի են համարվում «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված աուդիտորների և փորձագետ հաշվապահների շարունակական մասնագիտական զարգացման կարգի համաձայն).

6) աուդիտորը խուսափում է «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն արտաքին գնահատման ենթարկվելուց կամ արտաքին գնահատման արդյունքներով ստացել է «5» գնահատական:

2. Որակավորման չեղարկման որոշումն ընդունվում է մասնագիտացված կառույցի կողմից:

3. Որակավորման չեղարկման վերաբերյալ մասնագիտացված կառույցի որոշումը կարող է բողոքարկվել Հանրային վերահսկողության խորհրդին՝ չեղարկման վերաբերյալ մասնագիտացված կառույցի համապատասխան որոշման ընդունման օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում կամ դատական կարգով:

4. Բողոքարկման ընթացքում որակավորման չեղարկման վերաբերյալ մասնագիտացված կառույցի որոշումը կասեցվում է: Բողոքարկման ընթացքում աուդիտորների՝ մասնագիտացված կառույցին անդամակցությունը համարվում է կասեցված: Հանրային վերահսկողության խորհրդի կամ դատարանի կողմից բողոքարկումը չբավարարելու դեպքում որակավորման չեղարկման վերաբերյալ մասնագիտացված կառույցի որոշումը մնում է անփոփոխ: Հանրային վերահսկողության խորհրդի կամ դատարանի կողմից բողոքարկումը բավարարելու դեպքում Հանրային վերահսկողության խորհրդի որոշման հիման վրա մասնագիտացված կառույցը կայացնում է որակավորման չեղարկումը դադարացնելու վերաբերյալ որոշում:

5. Անձը, որի որակավորումը չեղարկվել է սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն, իրավունք չունի որակավորման քննությունների համար կրկին դիմել մասնագիտացված կառույցին որակավորումը չեղարկելու ամսաթվից հետո երեք տարվա ընթացքում:

6. Անձը, որի որակավորումը չեղարկվել է սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն, իրավունք չունի որակավորման քննությունների համար կրկին դիմել մասնագիտացված կառույցին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով նախատեսված ժամկետի ընթացքում:

Գ Լ ՈՒ Խ 5

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 30. Անցումային դրույթներ

1. «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-512-Ն օրենքի համաձայն տրված աուդիտորի որակավորման վկայականների գործողության ժամկետը լրանալու դեպքում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից դրանց գործողության ժամկետը երկարաձգվում է մինչև 2023 թվականի հունվարի 1-ը, եթե 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ այդ վկայականները հանդիսացել են գործող:

2. Եթե «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-512-Ն օրենքի համաձայն տրված աուդիտորի որակավորման վկայականների գործողության ժամկետը լրանում է 2023 թվականի հունվարի 1-ից հետո, ապա այդ վկայականները շարունակում են ուժի մեջ մնալ մինչև դրանց գործողության ժամկետը լրանալը:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասով նախատեսված վկայականները հիմք են հանդիսանում որպես աուդիտոր մասնագիտացված կառույցին անդամակցելու համար:

4. «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-512-Ն օրենքի համաձայն աուդիտորի որակավորման վկայական ունեցող աուդիտորներն իրավունք ունեն մինչև դրանց գործողության ժամկետը լրանալը մասնագիտացված կառույցի կողմից սահմանված պարզեցված կարգով ստանալ սույն օրենքով նախատեսված աուդիտորի որակավորման վկայական:

5. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-512-Ն օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հավատարմագրված մասնագիտացված կառույցի անդամը, ով ունի այդ մասնագիտացված կառույցի կողմից տրված աուդիտորի որակավորման վկայագիր, սույն օրենքով նախատեսված մասնագիտացված կառույցի կողմից սահմանված կարգով կարող է այդ վկայագիրը մինչև 2021 թվականի հունվարի 1-ը փոխարինել սույն օրենքով նախատեսված աուդիտորի որակավորման վկայականով:

6. 2021 թվականի հունվարի 1-ից աուդիտորական ծառայությունների իրականացման համար տրված լիցենզիաները ուժը կորցրած են համարվում, և այն աուդիտորական կազմակերպությունները, որոնք չեն անդամակցում մասնագիտացված կառույցներին, իրավունք չունեն մատուցել աուդիտորական ծառայություններ: «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-512-Ն օրենքի համաձայն աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա ստանալու համար մինչև սույն օրենքով նախատեսված առաջին մասնագիտացված կառույցի հավատարմագրումը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն դիմած կազմակերպությունների լիցենզավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 22-ի N 346-Ն որոշման համաձայն:

7. «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-512-Ն օրենքի հիման վրա ընդունված իրավական ակտերը մնում են ուժի մեջ այնքանով, որքանով չեն հակասում սույն օրենքի դրույթներին:

8. «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-512-Ն օրենքի համաձայն աուդիտորի որակավորում ստանալու համար մինչև սույն օրենքով նախատեսված առաջին մասնագիտացված կառույցի հավատարմագրումը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն դիմած դիմողներին աուդիտորի որակավորման վկայական տրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 3-ի «Աուդիտորների որակավորման հետ կապված հարցերը կանոնակարգելու մասին» N 123-Ն որոշման համաձայն:

Հոդված 31. Սույն օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-512-Ն օրենքը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն

Օ Ր Ե Ն Ք Ը

Ա Ո Ւ Դ Ի Տ Ո Ր Ա Կ Ա Ն Գ Ո Ր Ծ Ո Ւ Ն Ե Ո Ւ Թ Յ Ա Ն Մ Ա Ս Ի Ն

Գ Լ Ո Ւ Խ 1

Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Դ Ր Ո Ւ Յ Թ Ն Ե Ր

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում աուդիտորական գործունեության իրականացման հիմունքները և կանոնակարգում աուդիտորական գործունեության հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. Օրենքի գործողության ոլորտը

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող աուդիտորական գործունեության վրա: Պետական (հանրային) հատվածում արտաքին աուդիտը կոչվում է հաշվեքննություն և կարգավորվում է «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Ստորև բերված հասկացությունները սույն օրենքում օգտագործվում են հետևյալ իմաստով.

1) աուդիտոր՝ «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ մասնագիտացված կառույցի անդամ հանդիսացող ֆիզիկական անձ, որն ունի աուդիտորի որակավորում.

2) աուդիտորական կազմակերպություն՝ մասնագիտացված կառույցի անդամ հանդիսացող իրավաբանական անձ, որն իրավունք ունի մատուցել աուդիտորական ծառայություններ.

3) աուդիտի ենթարկվող անձ՝ իրավաբանական անձ, հիմնարկ, որին մատուցվում են աուդիտորական ծառայություններ.

4) աուդիտորական ծառայություն՝ աուդիտը և (կամ) աուդիտորական դիտարկումը.

5) աուդիտորական գործունեություն՝ աուդիտը, աուդիտորական դիտարկումը և աուդիտին հարակից ծառայությունները (համաձայնեցված ընթացակարգեր, կոմպիլացիա).

6) աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտներ՝ Հաշվապահների միջազգային դաշնության (IFAC) Աուդիտի և հավաստիացման միջազգային ստանդարտների խորհրդի (IAASB) կողմից հրապարակված և «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործողության մեջ դրված հետևյալ միջազգային ստանդարտները.

ա. Որակի հսկողության միջազգային ստանդարտներ (ISQC).

բ. Աուդիտի միջազգային ստանդարտներ (ISA).

գ. Դիտարկման առաջադրանքների միջազգային ստանդարտներ (ISRE).

դ. Հավաստիացման (բացի՝ աուդիտը և դիտարկումը) միջազգային ստանդարտներ (ISAE).

ե. Հարակից ծառայությունների միջազգային ստանդարտներ (ISRS).

7) պրոֆեսիոնալ հաշվապահների մասնագիտական էթիկայի կանոնագիրք՝ Հաշվապահների միջազգային դաշնության (IFAC) Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի (IESBA) կողմից հրապարակված և «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործողության մեջ դրված պրոֆեսիոնալ հաշվապահների մասնագիտական էթիկայի կանոնագիրքը (այսուհետ՝ Մասնագիտական էթիկայի կանոնագիրք), որի որոշ եզրույթներ և դրույթներ՝ համապատասխանեցված են սույն օրենքի, ինչպես նաև «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» և «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներին.

8) աուդիտորական կազմակերպությունների, աուդիտորների և փորձագետ հաշվապահների ռեեստր՝ ինչպես սահմանված է «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով.

9) մասնագիտացված կառույց՝ ինչպես սահմանված է «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում:

Հոդված 4. Աուդիտորական գործունեության ոլորտում քաղաքականություն իրականացնող մարմինը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող աուդիտորական գործունեության ոլորտում քաղաքականություն իրականացնող մարմինը (այսուհետ՝ Քաղաքականություն իրականացնող մարմին) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունն է՝ համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

Հոդված 5. Աուդիտորական գործունեությունը կարգավորող իրավական ակտերը

1. Աուդիտորական գործունեությունը կարգավորող իրավական ակտերը ներառում են՝
 - 1) սույն օրենքը.
 - 2) «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը.
 - 3) Աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտները.
 - 4) Մասնագիտական էթիկայի կանոնագիրքը.
 - 5) «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված իրավական այլ ակտերը:

Հոդված 6. Աուդիտորական կազմակերպությունը

1. Աուդիտորական կազմակերպությունը ձեռք է բերում աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք այն ամսաթվից, երբ նրա մասին տեղեկությունները գրանցվում են մասնագիտացված կառույցի՝ աուդիտորական կազմակերպությունների, աուդիտորների և փորձագետ հաշվապահների ռեեստրում (այսուհետ՝ Ռեեստր):

2. Կազմակերպությունը, որի մասին տեղեկությունները պետական գրանցման ամսաթվին հաջորդող օրվանից սկսած 60 աշխատանքային օրվա ընթացքում չեն ներառվել Ռեեստրում, չի կարող օգտագործել «աուդիտ», «աուդիտոր», «աուդիտորական» բառերը կամ դրանց ածանցյալներն իր անվանման մեջ:

Հոդված 7. Աուդիտորը

1. Ֆիզիկական անձը ճանաչվում է որպես աուդիտոր այն ամսաթվից, երբ նրա մասին տեղեկությունները գրանցվում են Ռեեստրում:

2. Աուդիտորները պարտավոր են պահպանել Մասնագիտական էթիկայի կանոնագրքի պահանջները:

Հոդված 8. Փոխկապակցված անձինք

1. Սույն օրենքի իմաստով, իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե՝

1) նրանցից մեկը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի, բաժնեմասերի, փայերի և մասնակցությունը հավաստող այլ արժեթղթերի (այսուհետ՝ բաժնետոմս) 20 և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի մասնակցել մյուսի որոշումների կայացմանը.

2) նրանցից մեկի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 20 տոկոսից ավելին տիրապետող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումների կայացմանը մասնակցելու հնարավորություն ունեցող մասնակիցները (բաժնետերերը) կամ նրանց ընտանիքի անդամներն իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետել (այդ թվում՝ առուվաճառքի, հավատարմագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրերի, հանձնարարության կամ այլ գործարքների հիման վրա) մյուս անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 20 տոկոսից ավելին կամ ունեն օրենքով չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն.

3) նրանցից մեկի խորհրդի նախագահը, խորհրդի անդամը, վարչության նախագահը, վարչության անդամը, գործադիր տնօրենը, ֆինանսական կառավարման գծով նրա տեղակալը, ֆինանսական ստորաբաժանման ղեկավարը, գլխավոր հաշվապահը կամ հաշվապահական հաշվառման վարման կամ ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու անձը, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը կամ ներքին աուդիտի համար պատասխանատու անձը, վերստուգիչ հանձնաժողովի նախագահը, վերստուգիչ հանձնաժողովի անդամը կամ նման այլ մարմինների անդամը (այսուհետ՝ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ), ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը միաժամանակ հանդիսանում է մյուս անձի որևէ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ:

2. Սույն օրենքի իմաստով, ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք միևնույն ընտանիքի անդամ են կամ վարում են ընդհանուր տնտեսություն կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն:

3. Սույն օրենքի իմաստով, ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

- 1) տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի 20 տոկոսից ավելին տնօրինող մասնակից.
- 2) օրենքով չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումների կայացմանը մասնակցելու հնարավորություն ունեցող անձ.
- 3) տվյալ իրավաբանական անձի կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ:

4. Սույն օրենքի իմաստով, միևնույն ընտանիքի անդամ են համարվում երեխան, ամուսինը, ծնողը, քույրը, եղբայրը, պապը, տատը, թոռը, քրոջ, եղբոր ամուսինն ու երեխաները, ինչպես նաև ամուսնու երեխան, ծնողը, քույրը, եղբայրը, պապը, տատը, թոռը:

Գ Լ ՈՒ Խ 2

ԱՌՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌՒԴԻՏԸ

Հոդված 9. Աուդիտորական գործունեությունը

1. Աուդիտորական գործունեությունն իրականացվում է աուդիտորական գործունեությունը կարգավորող իրավական ակտերով սահմանված կարգով:

2. Աուդիտը և աուդիտորական դիտարկումը աուդիտորական կազմակերպությանը հնարավորություն են ընձեռում տեղեկատվության արժանահավատության վերաբերյալ ապահովելու հավաստիացում, իսկ համաձայնեցված ընթացակարգերը և կոմպիլյացիան այդպիսի հավաստիացում չեն նախատեսում:

3. ~~Աուդիտորական ծառայության իրականացումն առանց մասնագիտացված կառույցին անդամակցելու, արգելվում է:~~ Աուդիտորական ծառայությունները պետք է իրականացվեն առնվազն մեկ աուդիտորի կողմից:

Հոդված 10. Աուդիտը

1. Աուդիտը աուդիտի ենթարկվող անձի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկատվության ~~անկախ~~ ստուգումն է՝ այդ տեղեկատվության արժանահավատության վերաբերյալ ~~անկախ~~ կարծիք արտահայտելու նպատակով, որն իրականացվում է աուդիտորական եզրակացություն տրամադրելու միջոցով:

2. Աուդիտն անցկացվում է օրենքով սահմանված դեպքերում (պարտադիր աուդիտ) կամ ~~աուդիտի ենթարկվող անձի նախաձեռնությամբ կամավոր~~ (կամավոր աուդիտ): Ինչպես պարտադիր, այնպես էլ կամավոր աուդիտն իրականացվում է աուդիտորական գործունեությունը կարգավորող իրավական ակտերով սահմանված կարգով: Կամավոր աուդիտը կարող է իրականացվել այլ հիմունքներով (աուդիտի այլ ստանդարտներով և այլն):

3. Պարտադիր աուդիտի ենթարկվող անձի ֆինանսական հաշվետվությունները Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններն են: Կամավոր աուդիտի ենթարկվող անձի ֆինանսական հաշվետվությունները կարող են պատրաստված լինել ինչպես Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի համաձայն, այնպես էլ այլ հիմունքներով:

Հոդված 11. Աուդիտորական դիտարկումը

1. Ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական դիտարկումն այնպիսի ընթացակարգերի իրականացում է, որը հնարավորություն է ընձեռում աուդիտորին՝ պարզելու, թե արդյոք առկա են այնպիսի փաստեր, որոնք կարող են վկայել այն մասին, որ ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, կազմված չեն հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերին համապատասխան:

Հոդված 12. Համաձայնեցված ընթացակարգերը

1. Համաձայնեցված ընթացակարգերն աուդիտորական բնույթի այնպիսի ընթացակարգեր են, որոնց շուրջ համաձայնության են գալիս այդ ընթացակարգերն իրականացնող անձը, իրավաբանական անձը (հիմնարկը կամ անհատ ձեռնարկատերը), անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան երրորդ անձը կամ անձինք, և որոնց արդյունքում այդ ընթացակարգերն իրականացնող անձի կողմից ներկայացված հաշվետվության հիման վրա այդ հաշվետվությունն օգտագործողները կարող են կատարել եզրահանգումներ:

Հոդված 13. Կոմպիլյացիան

1. Կոմպիլյացիան ֆինանսական տեղեկատվության հավաքումը, դասակարգումը և ամփոփումն է՝ այն օգտագործելու համար առավել հասկանալի և հարմար տեսքի բերելու նպատակով:

Հոդված 14. Աուդիտորական կազմակերպության աշխատանքի ձևերը և մեթոդները

1. Աուդիտորական կազմակերպությունն ինքնուրույն է ընտրում իր աշխատանքի ձևերն ու մեթոդները՝ ելնելով աուդիտորական գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջներից:

Հոդված 15. Աուդիտորի, աուդիտորական կազմակերպության գործունեության սահմանափակումները

1. Աուդիտորական կազմակերպությանը, բացի աուդիտորական գործունեությունից և սույն հոդվածի 2-րդ մասում նշված ծառայությունների մատուցումից, արգելվում է որևէ այլ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը, բացառությամբ այնպիսի գործունեությունից, որի

արդյունքում աուդիտորական կազմակերպությունը ստանում է Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքով սահմանված պասիվ եկամուտներ:

2. Աուդիտորական կազմակերպությունը կարող է մատուցել նաև հետևյալ ծառայությունները.

1) հաշվապահական հաշվառման ներդրում, վերականգնում և վարում, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների պատրաստում.

2) հաշվապահական հաշվառման, հարկերի, տնտեսագիտության, ֆինանսների և աուդիտի գծով ուսուցանում.

3) ակտիվների, այդ թվում՝ ֆինանսական գործիքների և (կամ) պարտավորությունների գույքագրում և գնահատում.

4) հարկերի, տուրքերի և պարտադիր այլ վճարների պլանավորում ու հաշվարկում.

5) կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն.

6) հաշվապահական, տնտեսագիտական, ֆինանսական, հարկային, կառավարչական և իրավաբանական խորհրդատվություն.

7) ներդրումային ծրագրերի մշակում և վերլուծություն, գործարար (բիզնես) պլանի կազմում.

8) հաշվապահական հաշվառմանը, աուդիտորական գործունեությանը, ֆինանսներին, տնտեսագիտությանը, հարկերին, տուրքերին և այլ պարտադիր վճարներին առնչվող գործունեության հետ կապված մասնագիտական փորձաքննության իրականացում.

9) մասնագիտական գրականության հրատարակում.

10) հարկային հաշվառման ներդրում, վերականգնում և վարում, հարկային հաշվարկների և հաշվետվությունների պատրաստում.

11) ներքին աուդիտի ծառայություն:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված ծառայությունների առանձին տեսակների մատուցման համար օրենքով հատուկ թույլտվություն (լիցենզիա) պահանջվելու դեպքում աուդիտորական կազմակերպությունը գործունեության այդ տեսակներով զբաղվելու համար պարտավոր է սահմանված կարգով ստանալ համապատասխան թույլտվություն (լիցենզիա):

4. Աուդիտորական կազմակերպությունը իրավունք չունի իր կողմից աուդիտի ենթարկվող անձին մատուցել սույն հոդվածի 2-րդ մասում նշված ծառայությունները, եթե՝

1) նշված ծառայությունների իրականացումը կհանգեցնի աուդիտորական կազմակերպության անկախության նկատմամբ պահանջների չպահպանմանը կամ կառաջացնի այդպիսի պահանջների չպահպանման վտանգ և (կամ) կհանգեցնի շահերի բախման առաջացմանը կամ այդպիսի բախման առաջացման վտանգի, և

2) աուդիտորական կազմակերպությունը չի կարող ընդունել համապատասխան միջոցներ՝ վերացնելու համար աուդիտորական կազմակերպության անկախության նկատմամբ պահանջների

չպահպանման վտանգը կամ իջեցնելու համար վտանգը մինչև այն մակարդակ, որի դեպքում Մասնագիտական էթիկայի կանոնագրքով սահմանված մասնագիտական էթիկայի հիմնական սկզբունքները (աուդիտորական ծառայությունների մասով) կպահպանվեն:

5. Աուդիտորական ծառայություն չի կարող մատուցել կամ աուդիտորական ծառայության մատուցմանը չի կարող մասնակցել՝

1) այն աուդիտորը կամ աուդիտորական կազմակերպությունը, որը հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի ապահովադիրը (բացառությամբ պարտադիր ապահովագրության տեսակների).

2) այն աուդիտորական կազմակերպությունը, որի կառավարման մարմնի անդամներից կամ նման պարտականություններ կատարող այլ անձանցից, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի ապահովադիրը (բացառությամբ պարտադիր ապահովագրության տեսակների).

3) այն աուդիտորական կազմակերպությունը, որի կառավարման մարմնի անդամներից կամ նման պարտականություններ կատարող այլ անձանցից, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը հանդիսանում է տվյալ իրավաբանական անձին փոխկապակցված անձ.

4) աուդիտորը՝ իրեն փոխկապակցված անձանց մոտ.

5) աուդիտորական կազմակերպությունը՝ իրեն փոխկապակցված անձանց մոտ.

6) աուդիտորը կամ աուդիտորական կազմակերպությունը՝ Աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտներով և (կամ) Մասնագիտական էթիկայի կանոնագրքով նախատեսված այլ դեպքերում:

Հոդված 16. Աուդիտի և հարակից ծառայությունների փաստաթղթավորումը

1. Աուդիտի և հարակից ծառայությունների իրականացումը պարտադիր փաստաթղթավորվում է աուդիտորական կազմակերպության կողմից՝ Աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտներով և Մասնագիտական էթիկայի կանոնագրքով սահմանված կարգով: Սույն օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված աուդիտորական ծառայության որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատումներ իրականացնող անձանց պահանջով աուդիտորական կազմակերպությունը պարտավոր է հնգօրյա ժամկետում տրամադրել արտաքին գնահատում իրականացնելու համար անհրաժեշտ օտարալեզու փաստաթղթերի հայերեն թարգմանված տարբերակները:

2. Աուդիտի փաստաթղթավորումը նախատեսում է աուդիտորի աշխատանքային փաստաթղթերի և աուդիտի արդյունքների հիման վրա աուդիտորական եզրակացության կազմումը: Պայմանագրով նախատեսված դեպքերում կամ աուդիտորական կազմակերպության

նախաձեռնությամբ կազմվում է նաև ղեկավարությանն ուղղված հաշվետվություն (նամակ ղեկավարությանը):

3. Աուդիտորի աշխատանքային փաստաթղթերն աուդիտի անցկացման նպատակով աուդիտորի կողմից պատրաստվող կամ ձեռք բերվող և պահպանվող փաստաթղթերն են:

4. Աուդիտորական եզրակացությունները, ղեկավարությանն ուղղված հաշվետվությունները, աուդիտորի աշխատանքային փաստաթղթերը և աուդիտի անցկացման հետ կապված այլ փաստաթղթերը պահպանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, բայց ոչ պակաս, քան աուդիտի անցկացմանը հաջորդող հինգ տարիների ընթացքում:

Հոդված 17. Աուդիտորական եզրակացությունը

1. Աուդիտորական եզրակացությունն աուդիտորական կազմակերպության կողմից կազմված փաստաթուղթ է, որում արտահայտվում է կարծիք՝ աուդիտի ենթարկվող անձի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Աուդիտորական եզրակացության ձևին, բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանվում են Աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտներով և Մասնագիտական էթիկայի կանոնագրքով:

2. Աուդիտորական եզրակացությունը կազմվում է առնվազն երկու օրինակից, ստորագրվում է աուդիտի անցկացման համար պատասխանատու աուդիտորի կողմից և հաստատվում է աուդիտորական կազմակերպության ղեկավարի ստորագրությամբ: Աուդիտորական եզրակացության մեկ օրինակը տրվում է աուդիտի ենթարկվող անձին, իսկ մյուսը մնում է աուդիտորական կազմակերպության մոտ:

Հոդված 18. Ոչ հավաստի աուդիտորական եզրակացությունը

1. Սույն օրենքի իմաստով, ոչ հավաստի աուդիտորական եզրակացությունն այն աուդիտորական եզրակացությունն է, որը կազմվել է առանց Աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտներին և (կամ) Մասնագիտական էթիկայի կանոնագրքին համապատասխան աուդիտ անցկացնելու:

2. Աուդիտորական եզրակացությունը ոչ հավաստի է ճանաչվում մասնագիտացված կառույցի որոշմամբ: Մասնագիտացված կառույցի որոշումը կարող է բողոքարկվել Հանրային վերահսկողության խորհրդին:

Հոդված 19. Ղեկավարությանն ուղղված հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը)

1. Ղեկավարությանն ուղղված հաշվետվությունը աուդիտորական կազմակերպության և աուդիտի ենթարկվող կազմակերպության միջև կնքված պայմանագրով նախատեսված դեպքերում աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտների համաձայն պատրաստվող փաստաթուղթ է, որում կարող են ներառվել տեղեկություններ աուդիտի ընթացքի, հայտնաբերված սխալների և թերությունների, հաշվապահական հաշվառման վարմանն ու ֆինանսական

հաշվետվությունների պատրաստմանը ներկայացվող պահանջների խախտումների, առանձին հարցերի գծով վերլուծության արդյունքների, պայմանագրով նախատեսված և այլ հարցերի մասին, ինչպես նաև առաջարկություններ սխալների և թերությունների վերացման ուղղությամբ: Աուդիտի ենթարկվող անձի կամ աուդիտորի ցանկությամբ կարող են ընդգրկվել նաև այլ տեղեկություններ:

Հոդված 20. Աուդիտորական գաղտնիքը

1. Աուդիտորական գաղտնիքը աուդիտորական գործունեության ընթացքում աուդիտորական կազմակերպության կամ նրա աշխատողների կողմից ստացված տեղեկություններն են, ինչպես նաև պատրաստված կամ ձեռք բերված փաստաթղթերը, բացառությամբ աուդիտորական եզրակացության և աուդիտորական դիտարկման վերաբերյալ եզրակացության:

2. Աուդիտորական գաղտնիքը ենթակա չէ հրապարակման, բացառությամբ՝

1) երբ հրապարակումը թույլատրված է աուդիտորական գործունեության ծառայությունները ստացող կազմակերպության կողմից,

2) օրենքով սահմանված դեպքերում:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտումն առաջացնում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:

Հոդված 21. Աուդիտորական ծառայության որակի հսկողությունը և դրա արտաքին գնահատումը

1. Աուդիտորական կազմակերպությունը պարտավոր է սահմանել աուդիտորական ծառայության որակի հսկողության կանոններ և պահպանել այդ կանոնները: Աուդիտորական ծառայության որակի հսկողության իրականացման սկզբունքները և նշված հսկողության կազմակերպման նկատմամբ պահանջները սահմանված են Աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտներով և Մասնագիտական էթիկայի կանոնագրքով:

2. Աուդիտորական կազմակերպությունը և աուդիտորը ենթակա են աուդիտորական ծառայության որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման: Նշված անձինք պարտավոր են արտաքին գնահատողին ներկայացնել գնահատման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը և տեղեկությունները:

3. Աուդիտորական ծառայության որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման առարկա է հանդիսանում աուդիտորական կազմակերպության և (կամ) աուդիտորի կողմից սույն օրենքի, «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտների և Մասնագիտական էթիկայի կանոնագրքի պահանջների պահպանման նկատմամբ հսկողությունը:

4. Աուդիտորական ծառայության որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատումն իրականացվում է այն մասնագիտացված կառույցի կողմից, ում անդամ է հանդիսանում աուդիտորական կազմակերպությունը և (կամ) աուդիտորը:

5. ~~Պարտադիր աուդիտ իրականացնող աուդիտորական~~ Աուդիտորական կազմակերպությունների աուդիտորական ծառայության որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատում, անհրաժեշտության դեպքում, կարող է իրականացվել նաև Հանրային վերահսկողության խորհրդի կողմից:

6. Աուդիտորական ծառայության որակի հսկողության պահանջների պահպանման պլանային արտաքին գնահատումները պետք է իրականացվեն ոչ հաճախ, քան տարին մեկ անգամ և ոչ ուշ, քան երեք տարին մեկ անգամ:

7. Աուդիտորական ծառայության որակի հսկողության պահանջների պահպանման ոչ պլանային արտաքին գնահատումների իրականացման համար հիմք կարող են հանդիսանալ սույն օրենքի և «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների, Աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտների և Մասնագիտական էթիկայի կանոնագրքի հնարավոր խախտումների վերաբերյալ մասնագիտացված կառույցի կամ Հանրային վերահսկողության խորհրդի կողմից ստացված տեղեկությունները:

Հոդված 22. Աուդիտորական կազմակերպության իրավունքները և պարտականությունները

1. Աուդիտորական կազմակերպությունն իրավունք ունի՝

1) ինքնուրույն որոշել աուդիտորական ծառայությունների իրականացման ձևերը և մեթոդները՝ Աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտների և Մասնագիտական էթիկայի կանոնագրքի հիման վրա, ինչպես նաև աուդիտորական ծառայությունները իրականացնող խմբի քանակական և անհատական կազմը.

2) աուդիտորական ծառայությունների իրականացման ընթացքում լրիվ ծավալով ուսումնասիրել աուդիտի ենթարկվող անձի ֆինանսատնտեսական գործունեությանն առնչվող փաստաթղթերը, ինչպես նաև ստուգել փաստաթղթերում հաշվառված գույքի փաստացի առկայությունը.

3) աուդիտի ենթարկվող անձից ստանալ աուդիտորական ծառայությունների իրականացման ընթացքում ծագած հարցերի վերաբերյալ բանավոր, գրավոր բացատրություններ և այլ անհրաժեշտ տեղեկություններ, ինչպես նաև պահանջել այդպիսի տեղեկությունների ստացումը երրորդ անձանցից.

4) աուդիտի ենթարկվող անձի գիտությամբ գրավոր հարցում անել և ստանալ երրորդ անձանցից անհրաժեշտ տեղեկատվություն կամ հավաստումներ.

5) աուդիտորական ծառայությունների իրականացման աշխատանքներում ներգրավել այլ աուդիտորների, մասնագետների (այդ թվում՝ պայմանագրային հիմունքներով), ինչպես նաև այլ առևտրային կազմակերպությունների: Աուդիտորական ծառայությունների իրականացման աշխատանքներում նշված անձանց ներգրավման կարգը նախատեսվում է Աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտներով և Մասնագիտական էթիկայի կանոնագրքով:

6) սույն օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կամ 2-րդ կետերով սահմանված պահանջների խախտման դեպքում հրաժարվել աուդիտորական ծառայությունների իրականացումից,

7) իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ գործողություններ:

2. Աուդիտորական կազմակերպությունը պարտավոր է՝

1) աուդիտորական գործունեության իրականացման ընթացքում պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները:

2) աուդիտի ենթարկվող անձի պահանջով ներկայացնել աուդիտորական կազմակերպության կողմից աուդիտի ենթարկվող անձին ներկայացված դիտողությունների և եզրահանգումների հիմնավորումները:

3) ապահովել իր աշխատող աուդիտորների, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում նշված անձանց կողմից սույն օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի պահանջների պահպանումը:

4) սույն օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով սահմանված պայմանների առկայության դեպքում հրաժարվել աուդիտորական ծառայություններ իրականացնելուց:

5) ապահովել աուդիտորական գործունեության իրականացման ընթացքում ստացված աուդիտորական, ծառայողական, առևտրային, բանկային, ապահովագրական կամ կենսաթոշակային գաղտնիք կազմող տեղեկությունների գաղտնիության պահպանումը: Գաղտնի տեղեկությունների ցանկը սահմանվում է օրենքով, աուդիտորական գործունեության իրականացման մասին պայմանագրով և ենթակա չէ հրապարակման, բացառությամբ օրենքով կամ պայմանագրով սահմանված դեպքերի, ինչպես նաև այն իրավաբանական անձի կամ հիմնարկի գրավոր համաձայնությամբ, որի մոտ իրականացվել է աուդիտորական գործունեությունը: Այդ ցանկում չեն ներառվում այն տեղեկությունները, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չեն կարող լինել աուդիտորական, ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք:

6) «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերի պահանջներից որևէ մեկը խախտվելու դեպքում խախտում թույլ տրվելու օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր հայտնել մասնագիտացված կառույցին:

7) մասնագիտացված կառույցի սահմանած կարգով, ժամկետներում և պարբերականությամբ նրան ներկայացնել աուդիտորական գործունեությանը վերաբերող հաշվետվություններ.

8) ապահովել պայմաններ մասնագիտացված կառույցի, Հանրային վերահսկողության խորհրդի համապատասխան աշխատակիցների, այդ թվում՝ մասնագիտացված կառույցի և Հանրային վերահսկողության խորհրդի կողմից ներգրավված մասնագետների համար՝ սույն օրենքով և «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված աուդիտորական ծառայության որակի հսկողության պահանջների պահպանման նկատմամբ արտաքին գնահատումն իրականացնելու համար.

~~9) մասնագիտացված կառույցի կողմից սահմանած կարգով վարել իր կողմից կնքված պայմանագրերի գրանցամատյան.~~

109) ունենալ ինտերնետային կայք, որում մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 30-ը ներառյալ պարտավոր է տեղադրել և առնվազն երեք տարի ժամկետով պահպանել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունները և աուդիտի ենթարկված անձանց ցանկը.

110) «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված և առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունը տրամադրել այդ օրենքով սահմանված լիազոր մարմնին փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ կասկածի կամ լիազոր մարմնի հարցման հիման վրա՝ այդ օրենքով սահմանված դեպքերում և կարգով.

121) կրել «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ օրենքներով նախատեսված պարտականությունները:

Հոդված 24. Աուդիտորական ծառայությունների վճարը

1. Աուդիտորական ծառայությունների դիմաց վճարի չափը, վճարման կարգը և ձևը որոշվում են կողմերի միջև կնքված պայմանագրով և չեն կարող կախվածության մեջ դրվել աուդիտի ենթարկվող անձի այնպիսի պահանջներից, որոնք կարող են ազդել աուդիտորական ծառայությունների իրականացման արդյունքում տրամադրվող աուդիտորական եզրակացության բովանդակության վրա:

2. Աուդիտորական ծառայությունների վճարի վրա չի կարող ազդել կամ դրա չափի որոշումը չի կարող պայմանավորված լինել լրացուցիչ ծառայություններ տրամադրելու փաստով:

3. Աուդիտորական ծառայությունների վճարը չի կարող հիմնվել որևէ ձևի պայմանականության վրա:

Գ Լ ՈՒ Խ 4

ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Հոդված 25. Աուդիտորների որակավորումը

1. Աուդիտորների որակավորումը սույն օրենքի 27-րդ հոդվածով սահմանված պահանջներին բավարարող՝ աուդիտորի որակավորում ստանալու համար մասնագիտացված կառույցին դիմած ֆիզիկական անձի (այսուհետ՝ դիմող) սույն հոդվածի 2-րդ մասի պահանջներին բավարարման հավաստումն է (այսուհետ՝ որակավորում):

2. Որակավորումը տրվում է մասնագիտացված կառույցի կողմից: Որակավորումը տրվում է այն

~~դիմորդին~~ դիմողին, որը միաժամանակ՝

1) հանձնել է որակավորման քննությունները.

2) որակավորումը ստանալու համար դիմում ներկայացնելու պահին ունի բարձրագույն կրթություն.

3) որակավորումը ստանալու համար դիմում ներկայացնելու պահին ունի աուդիտորական ծառայության իրականացման կամ հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հետ կապված առնվազն երեք տարվա աշխատանքային փորձ: Ընդ որում, նշված երեք տարվա աշխատանքային փորձից ոչ պակաս, քան մեկ տարվա աշխատանքային փորձը պետք է բաժին ընկնի աուդիտորական կազմակերպությունում՝ աուդիտորական ծառայությանը վերաբերող աշխատանքին: Աշխատանքային փորձին վերաբերող պահանջները սահմանվում են մասնագիտացված կառույցի կողմից՝ համաձայնեցնելով Հանրային վերահսկողության խորհրդի հետ:

3. Որակավորման քննությունների ծրագիրը (այդ թվում քննական առարկաների կազմը) և քննությունների անցկացման կարգը հաստատում է մասնագիտացված կառույցը՝ համաձայնեցնելով Հանրային վերահսկողության խորհրդի հետ: Որակավորման քննությունները կազմակերպվում և անցկացվում են մասնագիտացված կառույցի կողմից:

4. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջը համարվում է բավարարված դիմողի կողմից քննական բոլոր առարկաների գծով քննությունները հանձնելու դեպքում: Մասնագիտացված կառույցի կողմից սահմանված և Հանրային վերահսկողության խորհրդի հետ համաձայնեցված որակավորման քննություններից ազատման կարգի համաձայն՝ ~~դիմորդը~~ դիմողը կարող է ազատվել որոշակի առարկաների գծով քննություններ հանձնելուց:

5. Որակավորում չտալու վերաբերյալ որոշում կայացվում է այն դեպքում, երբ ~~դիմորդը~~ դիմողը չի համապատասխանում սույն հոդվածի 2-րդ մասի պահանջներին:

6. Աուդիտորը պարտավոր է որակավորումը ստանալու տարվան հաջորդող տարվանից սկսած՝ ~~յուրաքանչյուր օրացուցային տարի~~ անցնել շարունակական մասնագիտական զարգացում, որի նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանում է մասնագիտացված կառույցը՝ համաձայնեցնելով Հանրային վերահսկողության խորհրդի հետ: Շարունակական մասնագիտական զարգացման

տևողությունը յուրաքանչյուր օրացուցային տարվա համար չպետք է պակաս լինի 4020 ժամից, իսկ յուրաքանչյուր երկու հաջորդական տարիների համար՝ 80 ժամից:

7. Սույն հոդվածի համաձայն որակավորում ստացած դիմորդինդիմողին մասնագիտացված կառույցի կողմից տրվում է որակավորման վկայական: Որակավորման վկայականի ձևը և տրման կարգը սահմանում է մասնագիտացված կառույցը՝ համաձայնեցնելով Հանրային վերահսկողության խորհրդի հետ:

Հոդված 26. Աուդիտորների որակավորման քննությունների կազմակերպումը

1. Աուդիտորների որակավորման քննություններն անցկացնում է մասնագիտացված կառույցի կողմից ստեղծված աուդիտորների որակավորման հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով), որի անհատական կազմը և կանոնադրությունը հաստատում է մասնագիտացված կառույցը: Հանձնաժողովի ~~անհատական կազմը և~~ կանոնադրությունը համաձայնեցվում է Հանրային վերահսկողության խորհրդի հետ:

2. Որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման հետ կապված ծախսերը փոխհատուցելու նպատակով մասնագիտացված կառույցը գանձում է վճար: Վճարի չափը սահմանում է մասնագիտացված կառույցը՝ համաձայնեցնելով Հանրային վերահսկողության խորհրդի հետ:

Հոդված 27. Դիմողին ներկայացվող պահանջները

1. Աուդիտորների որակավորման քննությանը կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող այլ անձինք, ովքեր ունեն միջնակարգ կրթություն:

2. Աուդիտորների որակավորման քննություններին մասնակցել չի թույլատրվում այն անձին, ով՝

1) դատարանի վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատարանի վճռով զրկվել է ֆինանսատնտեսական հարաբերությունների իրականացման

բնագավառում որևէ պաշտոն զբաղեցնելու իրավունքից, բացառությամբ, եթե դատվածությունը հանված կամ մարված է:

Հոդված 28. Որակավորման ժամկետը

1. Որակավորումը տրվում է անժամկետ:

Հոդված 29. Որակավորման չեղարկման հիմքերը և կարգը

1. Որակավորումը չեղարկվում է այն դեպքերում, երբ՝

1) որակավորումը ստացվել է սույն օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասով և 27-րդ հոդվածով

դիմորդինդիմողին ներկայացված պահանջների խախտմամբ.

2) ուժի մեջ է մտել դատարանի վճիռը, որը որպես պատիժ նախատեսում է որոշակի ժամկետով աուդիտորական գործունեության իրականացման իրավունքից զրկում.

3) չի պահպանվել սույն օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի և 20-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները.

4) աուդիտորի կողմից ստորագրվել է աուդիտորական եզրակացություն, որը ճանաչվել է ոչ հավաստի.

5) չեն պահպանվել սույն օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները՝ կապված շարունակական մասնագիտական զարգացման հետ, բացառությամբ այն դեպքերի, ~~երբ մասնագիտացված կառույցը հարգելի է ճանաչել այս պահանջների չպահպանումը (մասնավորապես՝ ծանր հիվանդությունը որոշիչ հարգելի են համարվում «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված աուդիտորների և փորձագետ հաշվապահների շարունակական մասնագիտական զարգացման կարգի համաձայն)~~.

6) աուդիտորը խուսափում է «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն արտաքին գնահատման ենթարկվելուց կամ արտաքին գնահատման արդյունքներով ստացել է «5» գնահատական:

2. Որակավորման չեղարկման որոշումն ընդունվում է մասնագիտացված կառույցի կողմից:

3. Որակավորման չեղարկման վերաբերյալ մասնագիտացված կառույցի որոշումը կարող է բողոքարկվել Հանրային վերահսկողության խորհրդին՝ չեղարկման վերաբերյալ մասնագիտացված կառույցի համապատասխան որոշման ընդունման օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում կամ դատական կարգով:

4. Բողոքարկման ընթացքում որակավորման չեղարկման վերաբերյալ մասնագիտացված կառույցի որոշումը կասեցվում է: Բողոքարկման ընթացքում աուդիտորների՝ մասնագիտացված կառույցին անդամակցությունը համարվում է կասեցված: Հանրային վերահսկողության խորհրդի կամ դատարանի կողմից բողոքարկումը չբավարարելու դեպքում որակավորման չեղարկման վերաբերյալ մասնագիտացված կառույցի որոշումը մնում է անփոփոխ: Հանրային վերահսկողության խորհրդի կամ դատարանի կողմից բողոքարկումը բավարարելու դեպքում Հանրային վերահսկողության խորհրդի որոշման հիման վրա մասնագիտացված կառույցը կայացնում է որակավորման չեղարկումը դադարացնելու վերաբերյալ որոշում:

5. Անձը, որի որակավորումը չեղարկվել է սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն, իրավունք չունի որակավորման քննությունների համար կրկին դիմել մասնագիտացված կառույցին որակավորումը չեղարկելու ամսաթվից հետո երեք տարվա ընթացքում:

6. Անձը, որի որակավորումը չեղարկվել է սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն, իրավունք չունի որակավորման քննությունների համար կրկին դիմել մասնագիտացված կառույցին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով նախատեսված ժամկետի ընթացքում:

Հոդված 30. Անցումային դրույթներ

1. ~~«Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-512-Ն օրենքի համաձայն տրված աուդիտորի որակավորման վկայականները շարունակում են ուժի մեջ մնալ մինչև դրանց գործողության ժամկետը լրանալը:~~ «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-512-Ն օրենքի համաձայն տրված աուդիտորի որակավորման վկայականների գործողության ժամկետը լրանալու դեպքում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից դրանց գործողության ժամկետը երկարաձգվում է մինչև 20222023 թվականի հունվարի 1-ը, եթե 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ այդ վկայականները հանդիսացել են գործող:

2.2. Եթե «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-512-Ն օրենքի համաձայն տրված աուդիտորի որակավորման վկայականների գործողության ժամկետը լրանում է 2023 թվականի հունվարի 1-ից հետո, ապա այդ վկայականները շարունակում են ուժի մեջ մնալ մինչև դրանց գործողության ժամկետը լրանալը:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասով նախատեսված վկայականները հիմք են հանդիսանում որպես աուդիտոր մասնագիտացված կառույցին անդամակցելու համար:

4. «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-512-Ն օրենքի համաձայն աուդիտորի որակավորման վկայական ունեցող աուդիտորներն իրավունք ունեն մինչև 2022 թվականի հունվարի 1-ը դրանց գործողության ժամկետը լրանալը մասնագիտացված կառույցի կողմից սահմանված պարզեցված կարգով ստանալ սույն օրենքով նախատեսված աուդիտորի որակավորման վկայական:

~~3. Մինչև 2020 թվականի հունվարի 1-ը աուդիտորական կազմակերպությունները և աուդիտորները պարտավոր են իրականացնել մասնագիտացված կառույցին անդամակցության վերաբերյալ «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջները: Ընդ որում, սույն հոդվածի 1-ին մասում նշված աուդիտորները մասնագիտացված կառույցին կարող են անդամակցել մինչև 2022 թվականի հունվարի 1-ը:~~

4. 20205. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-512-Ն օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հավատարմագրված մասնագիտացված կառույցի անդամը, ով ունի այդ մասնագիտացված կառույցի կողմից տրված աուդիտորի որակավորման վկայագիր, սույն օրենքով նախատեսված մասնագիտացված կառույցի

կողմից սահմանված կարգով կարող է այդ վկայագիրը մինչև 2021 թվականի հունվարի 1-ը փոխարինել սույն օրենքով նախատեսված աուդիտորի որակավորման վկայականով:

6. 2021 թվականի հունվարի 1-ից աուդիտորական ծառայությունների իրականացման համար տրված լիցենզիաները ուժը կորցրած են համարվում, և այն աուդիտորական կազմակերպությունները, որոնք չեն անդամակցում մասնագիտացված կառույցներին ~~մինչև այդ ժամկետը լրանալը, իրավունք չունեն մատուցել աուդիտորական ծառայություններ, իրավունք չունեն մատուցել աուդիտորական ծառայություններ:~~ «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-512-Ն օրենքի համաձայն աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա ստանալու համար մինչև սույն օրենքով նախատեսված առաջին մասնագիտացված կառույցի հավատարմագրումը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն դիմած կազմակերպությունների լիցենզավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 22-ի N 346-Ն որոշման համաձայն:

5-7. «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-512-Ն օրենքի հիման վրա ընդունված իրավական ակտերը մնում են ուժի մեջ այնքանով, որքանով չեն հակասում սույն օրենքի դրույթներին:

8. «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-512-Ն օրենքի համաձայն աուդիտորի որակավորում ստանալու համար մինչև սույն օրենքով նախատեսված առաջին մասնագիտացված կառույցի հավատարմագրումը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն դիմած դիմողներին աուդիտորի որակավորման վկայական տրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 3-ի «Աուդիտորների որակավորման հետ կապված հարցերը կանոնակարգելու մասին» N 123-Ն որոշման համաձայն:

Հոդված 31. Սույն օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-512-Ն օրենքը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հաշվապահական հաշվառման մասին», «Աուդիտորական գործունեության մասին», «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին», «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի (Կ-116-25.04.2019,25.09.2019-ՖՎ-011/1) վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի նախագիծ					
1	ՀՀ կառավարություն	Նախագծերի տեքստերում	«Հանրային հաշվետվողականություն ունեցող կազմակերպություններ» հասկացությունը փոխարինվել է «Հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպություններ» հասկացությամբ	Ընդունվել է: Փոփոխության նպատակը նշված խմբի կազմակերպությունների կարգավիճակն ավելի ակնառու դարձնելն է:	Ընդունվել է:
2	ՀՀ ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	3-րդ հոդված 6-րդ կետի բ ենթակետ.	Հանրային ծառայություններ մատուցող ընկերությունները, ինչպես նաև շուկայում գերիշխող դիրք ունեցողները ևս պետք է ներառվեն այս խմբում, քանի որ,	Չի ընդունվել: Հանրային ծառայություններ մատուցող ընկերությունները որպես հանրային	Չի ընդունվել:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			<p>օրինակ՝ ներդրումային ընկերություններից առավել դրանք են առաջին հերթին հանրային հաշվետվողականություն ունեցող ընկերությունները:</p>	<p>հաշվետվողականություն ունեցող դիտարկելու գաղափարին դեմ չենք, սակայն կարծում ենք, որ նման ծառայություններ մատուցող մեծ ընկերությունները այս օրենքի նախագծի շրջանակներում կբավարարեն առնվազն միջին կազմակերպության դասակարգմանը և, հետևաբար, ֆինանսական հաշվետվությունների հրապարակման և պարտադիր աուդիտի պահանջները կտարածվեն նաև այդ կազմակերպությունների վրա: Այնուամենայնիվ, եթե խոսքը վերաբերում է բոլոր հանրային ծառայություններ մատուցողներին (փոքր ՋՐԷԿ, ինտերնետային սպասարկմամբ զբաղվող փոքր ընկերություն և այլն), ապա անհրաժեշտ կլինի</p>	

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
				<p>լրացուցիչ քննարկումներ իրականացնել Հանրային Ծառայությունները Կարգավորող Հանձնաժողովի հետ՝ այդ կազմակերպությունների շրջանակը և ֆինանսական հաշվետվողականության և աուդիտի հետ կապված գործող կարգավորումները հասկանալու համար:</p> <p>Ինչ վերաբերում է շուկայում գերիշխող դիրք ունեցող կազմակերպություններին, ապա եթե շուկան իր ծավալներով փոքր չէ (օրինակ տարեկան 4 մլրդ դրամից), ապա, ըստ էության, այդ շուկայում գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունը այս օրենքի շրջանակներում կդասակարգվի առնվազն որպես միջին կազմակերպություն և պարտավոր կլինի հրապարակել և աուդիտի</p>	

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
				<p>Ենթարկել իր ֆինանսական հաշվետվությունները: Միաժամանակ, ՀՀ ՏՄՊՊՀ 2011 թվականի մայիսի 23-ի թիվ 194-Ն որոշմամբ հաստատվել է նաև տնտեսվարող սուբյեկտի գերիշխող դիրքի որոշման կարգը, որի համաձայն գերիշխող դիրքը որոշելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել մի շարք գնահատումներ, ինչը կարող է դժվարացնել օրենքի համապատասխան դրույթի կիրառումը: Միաժամանակ, դրույթի կիրառման նպատակով անհրաժեշտություն կառաջանա, որպեսզի ՏՄՊՊՀ-ն յուրաքանչյուր տարի գնահատի ՀՀ-ում գործող բոլոր շուկաները:</p>	
3	ՀՀ ԱԺ պատգամավոր	3-րդ հոդվածի	Իտոշոր, միջին և փոքր ընկերությունների դասակարգումը կնկնում	Չի ընդունվել:	Չի ընդունվել:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
	Արտակ Մանուկյան	7-րդ կետ.	<p>Է Եվրամիության կողմից սահմանված չափանիշները, այնինչ դրա անդամ ամենաաղքատ երկրից ՀՀ-ն առնվազն կրկնակի աղքատ է մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ով: Ավելին, նույնիսկ փոքր ընկերությունների համար սահմանվել է 100 աշխատակցի պայմանական շեմ, այն դեպքում, երբ Եվրամիությունում այդ չափանիշը 50 է:</p> <p>Այս առումով հետաքրքիր է իմանալ, թե Կառավարության գնահատականով ՀՀ-ում տնտեսվարող սուբյեկտներից քանի՞սն են համապատասխանելու խոշորի, միջինի, փոքրի և միկրոյի չափանիշներին:</p> <p>Կարծում ենք, որ չափանիշները պետք է կրկնակի պակասեցնել:</p> <p>Առաջարկում ենք նաև գերխոշորների խումբ առանձնացնել, որի համար սահմանել 500 աշխա-</p>	<p>Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտներում բարեփոխման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև պարտադիր աուդիտի ենթակա կազմակերպությունների շրջանակի ճշգրտման անհրաժեշտությամբ՝ ներկայումս գործող օրենսդրական ձևական պահանջից անցում կատարելով իրապես աուդիտի ենթարկվելու հանրային պահանջ ունեցող ընկերություններ ներգրավելուն:</p> <p>Ներկայումս տարբեր օրենքներով պարտադիր աուդիտի է ենթակա շուրջ 1,200 կազմակերպություն, որոնց գրեթե կեսը որևէ գործունեություն չիրականացնող բաց բաժնետիրական ընկերություններ են:</p>	

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			<p>տակցի, ինչպես նաև ակտիվների և հասույթի համար համապատասխանաբար 50 և 100 միլիարդ դրամի շեմ: Այս խմբի համար պետք է կիրառվեն ամենախիստ պահանջները:</p>	<p>Միաժամանակ, մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը պարտադիր աուդիտի պահանջ սահմանված է եղել նաև «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի իմաստով խոշոր համարվող կազմակերպությունների համար: Սակայն, տնտեսավարող սուբյեկտների և մասնագիտական հանրության կողմից արտաքին աուդիտի որակի վերաբերյալ ներկայացված մի շարք մտահոգությունների արդյունքում 2014 թվականի մայիսին հանվեց խոշոր կազմակերպությունների աուդիտի ենթարկվելու պարտադիր պահանջը: Հետևաբար, օրենքի նախագծում առկա սահմանաչափերի նվազեցման պարագայում կարող է ռիսկ առաջանալ, որ նորից ի</p>	

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
				<p>հայտ կգան աուդիտորական կազմակերպություններ, որոնք ոչ բարեխիղճ վարքագիծ կդրսևորեն:</p> <p>Մեր գնահատմամբ կազմակերպությունների թվաքանակը հետևյալն է՝</p> <p>Միջին կազմակերպություններ – շուրջ 230</p> <p>Խոշոր կազմակերպություններ – շուրջ 80</p> <p>ՀՀ-ում գրանցված մնացած կազմակերպությունները սույն օրենքների նախագծերի իմաստով կդասակարգվեն որպես փոքր կամ միկրո կազմակերպություններ:</p> <p>Ինչ վերաբերում է գերխոշոր կազմակերպությունների խումբ սահմանելուն և ամենախիստ պահանջները նրանց նկատմամբ սահ-</p>	

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
				մանելուն, ապա հայտնում ենք, որ օրենքների փաթեթով միջին կազմակերպություններից սկսած բոլոր կազմակերպությունները ենթարկվում են միևնույն խիստ կարգավորումների, օրինակ՝ ֆինանսական հաշվետվությունների հրապարակումը, աուդիտի ենթարկելը, որակավորված գլխավոր հաշվապահ ունենալը և այլն:	
4	ՀՀ ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	3-րդ հոդվածի 9-րդ կետի գ ենթակետ.	Ինչու՞ է 100, եթե եվրոպայում 50 է:	Չի ընդունվել: Ցուցանիշը փոփոխվել է հանրային քննարկումների արդյունքում ներկայացված առաջարկությունների հիման վրա: Տես նաև 1-ին առաջարկության մեկնաբանությունը:	Չի ընդունվել:
5	ՀՀ ԱԺ պատգամավոր	7-րդ հոդվածի	Հավանաբար պետք է ներառի սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ	Չի ընդունվել:	Չի ընդունվել:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
	Արտակ Մանուկյան	4-րդ կետ.	մասով նախատեսված կազմակերպությունները: Ինչու՞ չկա, ասենք, ներդրումային ֆոնդի կառավարիչը: Այս հարցով ԿԲ-ից ասացին, որ վրիպակ է ու փոփոխված տեքստի հետ կապված կտեղեկացնեն ԱԺ-ին:	ԿԲ կողմից առաջարկվող նոր խմբագրություն չի ներկայացվել:	
6	ՀՀ ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	10-րդ հոդվածի 1-ին մաս	Մասում «կարող են աշխատել» բառերից հետո ավելացնել «միայն» բառը՝ տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու համար:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
7	ՀՀ կառավարություն	17-րդ հոդված 6-րդ մաս	ՇՄՁ տևողության նկատմամբ պահանջը համապատասխանեցնել ԵԱՏՄ անդամ երկրների միջև կնքվող աուդիտի համաձայնագրի պահանջներին՝ այն է, 1 տարվա ընթացքում առնվազն 40 ժամ տևողությամբ ՇՄՁ անցնելու պահանջը փոխարինել 2 տարվա ընթացքում առնվազն 80 ժամ տևողությամբ ՇՄՁ անցնելու պահանջով, բայց ոչ պակաս քան	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			20 ժամ յուրաքանչյուր օրացուցային տարվա համար:		
8	ՀՀ կառավարություն	18-րդ հոդվածի 1-ին մաս	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՎԽ հետ համաձայնեցվելու է որակավորման քննություններ անցկացնող որակավորման հանձնաժողովի կանոնադրությունը, որակավորման հանձնաժողովի անհատական կազմը ՀՎԽ հետ համաձայնեցնելու անհրաժեշտություն չկա:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
9	ՀՀ կառավարություն	21-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ	3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ «չի պահպանվել սույն օրենքի 17-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները՝ կապված շարունակական մասնագիտական զարգացման հետ, բացառությամբ այն դեպքերի, որոնք հարգելի են համարվում «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և	Ընդունվել է: Նախկին խմբագրությամբ ՇՄՁ պահանջները չկատարելու դեպքերը հարգելի էին ճանաչվում մասնագիտացված կառույցի կողմից, ինչը կարող էր առաջացնել տարաբնույթ ռիսկեր: Առաջարկվող խմբագրու-	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված աուդիտորների և փորձագետ հաշվապահների շարունակական մասնագիտական զարգացման կարգի համաձայն»	թյամբ ՇՄՁ պահանջները չկատարելու դեպքերը հարգելի կհամարվեն աուդիտորների և փորձագետ հաշվապահների ՇՄՁ կարգով, որը մշակվում է մասնագիտացված կառույցի կողմից և համաձայնեցվում ՀՎԽ հետ:	
10	ՀՀ կառավարություն	27-րդ հոդվածի 6-րդ մաս	Նախատեսել դրույթ առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները հրապարակումից հետո առնվազն 5 տարի պետք է պահպանվեն այն կայքում, որտեղ դրանք հրապարակվել են	Ընդունվել է: Նշված դրույթի նախատեսումը պայմանավորված է այն ռիսկի առկայությամբ, որ կազմակերպությունները կարող են հրապարակել իրենց ֆինանսական հաշվետվությունները և անմիջապես կամ որոշ ժամանակ անց հանել հրապարակման կայքից:	Ընդունվել է:
11	ՀՀ ԱԺ պատգամավոր Վահագն Թևոսյան	27-րդ հոդվածի 6-րդ մաս	6-րդ մասում՝ 1. «պաշտոնական ինտերնետային կայքում» բառերից հետո լրացնել	Ընդունվել է մասնակի: Օրենքի նախագծի 27-րդ հոդվածի 6-րդ մասով	Ընդունվել է մասնակի:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			<p>«կամ տպագիր մամուլում» բառերով:</p> <p>2. «հրապարակել է իր ինտերնետային կայքում» բառերից հետո լրացնել «կամ տպագիր մամուլում,» բառերով:</p> <p>3. «հղումը (հասցեն)» բառերից հետո լրացնել «կամ տպագիր մամուլի անունը, թողարկման համարը և ամսաթիվը» բառերով:</p> <p>Գործող «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ֆինանսական հաշվետվությունները կարող են հրապարակվել մամուլում, ինտերնետով կամ տարածվել գրքույկների ձևով: «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի նախագծով տպագիր մամուլը այլևս չի հանդիսանա ֆինանսական հաշվետվությունների հրապարակ-</p>	<p>սահմանվել է, որ կազմակերպությունները, որոնց ֆինանսական հաշվետվություններն օրենքին համապատասխան ենթակա են հրապարակման, ֆինանսական հաշվետվությունների պատկերամուտները հրապարակում են իրենց ինտերնետային կայքում կամ http://www.azdarar.am հասցեում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Հաշվի առնելով վերը նշվածը՝ կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքին նշված ձևակերպմամբ որևէ մենաշնորհ չի տրամադրվել, քանի որ կազմա-</p>	

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			<p>ման միջոց: Տպագիր լրատվամիջոցների բացառումը, որպես ֆինանսական հաշվետվությունների հրապարակման տարբերակ, գրկում է մամուլին տնտեսական մրցակցության հնարավորությունից, ինչպես նաև եկամտի հավելյալ աղբյուրից, ինչը վտանգում է լրատվամիջոցների ֆինանսական անկախությանը: Կարևոր է արձանագրել, որ պետական կայք հանդիսացող http://www.azdarar.am -ը ծանուցումներն անվճար չի տեղադրում, ավելին՝ շուկայական գներից ավելի թանկ է մատուցում ծառայությունը: Սա կարող է դիտարկվել որպես մենաշնորհային դիրքի չարաշահում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թերևս կարևորվում է բոլոր հայտարարությունների մեկտեղումը մեկ վայրում, այնուամենայնիվ նկատելի է նաև, որ գործադիրը համաձայն է http://www.azdarar.am</p>	<p>կերպությունները վերը նշված կայքից բացի, հնարավորություն ունեն ֆինանսական հաշվետվությունները հրապարակել նաև իրենց ինտերնետային կայքերում:</p> <p>Միաժամանակ, կարծում ենք, որ տպագիր մամուլում ֆինանսական հաշվետվությունները հրապարակելը գործնականում իրատեսական չէ, քանի որ Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին համապատասխան պատրաստված ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը սովորաբար կազմում է միջինում շուրջ 60 էջ: Նշվածը հաշվի առնելով, առաջարկի հիման վրա Օրենքի նախագծի 27-րդ հոդվածի 6-րդ մասը</p>	

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			<p>-ում տեղադրել միայն հղումներ, եթե հաշվետվությունները տպագրված են հաշվետու սուբյեկտի կայքում: Ըստ այդմ առաջարկում են նույն սկզբունքով հնարավորություն տալ http://www.azdarar.am -ում հրապարակել միայն տպագիր լրատվամիջոցի անունը, թողարկման համարն ու ամսաթիվը, եթե հաշվետվությունը տպագրվել է տպագիր մամուլում: Անհրաժեշտության դեպքում, այդ տեղեկությունն օգտագործելով, անհրաժեշտ հաշվետվությունը հնարավոր կլինի գտնել Ազգային արխիվում:</p>	<p>խմբագրվել է հետևյալ կերպ. «6. Կազմակերպությունները, որոնց ֆինանսական հաշվետվություններն օրենքին համապատասխան ենթակա են հրապարակման, ֆինանսական հաշվետվությունների պատկերամուտները հրապարակում են իրենց ինտերնետային կայքում, http://www.azdarar.am հասցեում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում կամ <u>Հայաստանի Հանրապետությունում գրանցված զանգվածային լրատվության միջոցի պաշտոնական ինտերնետային կայքում</u>: Ընդ որում, եթե կազմակերպությունը ֆինանսական հաշվետվությունները</p>	

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
				<p>հրապարակել է իր ինտերնետային կայքում <u>կամ Հայաստանի Հանրապետությունում գրանցված զանգվածային լրատվության միջոցի պաշտոնական ինտերնետային կայքում</u>, ապա ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ինտերնետային կայքի հղումը (հասցեն) պարտավոր է հրապարակել նաև http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:»</p>	
12	ՀՀ ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	27-րդ հոդվածի 7-րդ մաս.	Պետք է սահմանել 3 աշխատանքային օր: 10 օրը շատ երկար ժամկետ է կայքին հղումը տրամադրելու կամ ֆայլն էլեկտրոնային կրիչով փոխանցելու համար:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
13	ՀՀ կառավարություն	29-րդ հոդված	Անցումային դրույթներում տարբեր կարգավորումներին առնչվող անցումային ժամկետները հետաձգել 1 տարով	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է, քանի որ անցումային դրույթներում ներկայումս նախատեսված ժամկետները սահմանվել էին նախորդ տարվա սեպտեմբերին, երբ ՀՀ կառավարությունը հավանության արժանացրեց օրենքների նախագծերի փաթեթը և ներկայացրեց ՀՀ ԱԺ քննարկման: Ներկայումս անհրաժեշտություն է առաջացել 1 տարով հետաձգել ժամկետները:	Ընդունվել է:
14	ՀՀ կառավարություն	29-րդ հոդված	Անցումային դրույթներում նախատեսել նոր մաս ներկայումս ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավատարմագրված մասնագիտացված կառույցի կողմից տրամադրված հաշվապահների որակավորման վկայագրեր ունեցող անձանց համար առ այն, որ այդ վկայա-	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			գրերը մինչև 2021 թվականի հունվարի 1-ը դիմելու դեպքում կփոխարինվեն փորձագետ հաշվապահի որակավորման վկայականով:		
15	ՀՀ կառավարություն	29-րդ հոդված	Անցումային դրույթներում նախատեսել նոր մաս, որով ՀՀ ֆինանսների նախարարությանը հնարավորություն կընձեռվի ընթացք տալ հաշվապահի որակավորում ստանալու համար ներկայացված այն բոլոր դիմումներին, որոնք կստացվեն մինչև օրենքի նախագծով նախատեսված առաջին մասնագիտացված կառույցի հավատարմագրումը:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
16	ՀՀ կառավարություն	3-րդ հոդվածի 1-ին մաս, 7-րդ հոդվածի 4-րդ մաս, 17-րդ հոդվածի	Կատարել տեխնիկական և խմբագրական բնույթի շտկումներ:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
		<p>2-րդ, 4-րդ, 5-րդ և 7-րդ մասեր, 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր, 19-րդ հոդվածի 2-րդ մաս, 21-րդ հոդվածի 1-ին մաս, 29-րդ հոդվածի 1-ին մաս</p>			
17	<p>ՀՀ Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողով</p>	<p>10-րդ հոդվածի 3- րդ կետ</p>	<p>Նախատեսել, որ ֆինանսական կազմակերպությունների գլխավոր հաշվապահ աշխատելու համար, ի լրումն փորձագետ հաշվապահ կամ աուդիտոր լինելու պահանջի, ՀՀ կենտրոնական բանկը կարող է սահմանել նաև լրացուցիչ</p>	<p>Ընդունել է : Համապատասխանաբար փոփոխվել են Նախագծի 10- րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 29-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը, ինչպես նաև 29-րդ հոդվածում</p>	<p>Ընդունել է :</p>

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			պահանջներ, ինչպես նաև անցումային դրույթ սահմանել այն անձանց համար, ովքեր օրենքն ուժի մեջ մտնելու պահին կունենան ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված հաշվապահի որակավորում	Նախատեսվել է նոր 8-րդ մաս	
18	ՀՀ կառավարություն	3-րդ հոդվածի ին մասի 3-րդ կետում, 4-րդ հոդվածի 2-րդ մասում, 7-րդ հոդվածի 4-րդ մասում, 27-րդ հոդվածի 3-րդ մասում	1- Կատարել խմբագրական բնույթի շտկումներ 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում, 4-րդ հոդվածի 2-րդ մասում, 7-րդ հոդվածի 4-րդ մասում, 27-րդ հոդվածի 3-րդ մասում	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
«Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագիծ					
1	ՀՀ կառավարություն	22-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետ	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ աուդիտորական կազմակերպությունները պարտավոր են ԱՄՍ-ներին համապատասխան իրականացնել աուդիտի փաստաթղթավորում, ինչպես նաև	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			<p>ՀՎԽ կողմից ապահովվելու է աուդիտորական կազմակերպությունների նկատմամբ որակի հսկողության արտաքին գնահատման իրականացման ընթացակարգերի մշակումը և հաստատումը, որով մանրամասն ներկայացվելու են աուդիտորական կազմակերպությունների կողմից անցկացվող աուդիտի որակի ստուգման նկատմամբ բոլոր պահանջները, առաջարկվում է հանել աուդիտորական կազմակերպությունների պարտավորությունը՝ վարելու իր կողմից կնքված պայմանագրերի գրանցամատյանը:</p>		
2	ՀՀ կառավարություն	25-րդ հոդվածի 6-րդ մաս	<p>ՇՄՁ տևողության նկատմամբ պահանջը համապատասխանեցնել ԵԱՏՄ անդամ երկրների միջև կնքվող աուդիտի համաձայնագրի պահանջներին՝ այն է, 1 տարվա ընթացքում առնվազն 40 ժամ տևողությամբ ՇՄՁ անցնելու պահանջը փոխարինել 2 տարվա</p>	<p>Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:</p>	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			ընթացքում առնվազն 80 ժամ տևողությամբ ՇՄՁ անցնելու պահանջով, բայց ոչ պակաս քան 20 ժամ յուրաքանչյուր օրացուցային տարվա համար		
3	ՀՀ կառավարություն	26-րդ հոդվածի 1-ին մաս	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՎԽ հետ համաձայնեցվելու է որակավորման քննություններ անցկացնող որակավորման հանձնաժողովի կանոնադրությունը, որակավորման հանձնաժողովի անհատական կազմը ՀՎԽ հետ համաձայնեցնելու անհրաժեշտություն չկա:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
4	ՀՀ կառավարություն	29-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ	5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «չեն պահպանվել սույն օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները՝ կապված շարունակական մասնագիտական զարգացման հետ, բացառությամբ այն դեպքերի, որոնք հարգելի են համարվում «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական	Ընդունվել է: Նախկին խմբագրությամբ ՇՄՁ պահանջները չկատարելու դեպքերը հարգելի էին ճանաչվում մասնագիտացված կառույցի կողմից, ինչը կարող էր առաջացնել տարաբնույթ ռիսկեր: Առաջարկվող խմբագրությամբ ՇՄՁ	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված աուդիտորների և փորձագետ հաշվապահների շարունակական մասնագիտական զարգացման կարգի համաձայն»	պահանջները չկատարելու դեպքերը հարգելի կհամարվեն աուդիտորների և փորձագետ հաշվապահների ՇՄՁ կարգով, որը մշակվում է մասնագիտացված կառույցի կողմից և համաձայնեցվում ՀՎԽ հետ:	
5	ՀՀ ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	30-րդ հոդված	<p>Ավելացնել 6-րդ մաս.</p> <p>«սույն օրենքի հոդված 21-ի 6-րդ մասը կիրառվում է օրենքն ընդունելուց հետո մատուցած աուդիտորական ծառայությունների նկատմամբ»:</p> <p>Քանի որ մինչև սույն օրենքի ընդունումը աուդիտորական կազմակերպությունների կողմից մատուցված աուդիտորական ծառայությունների համապատասխանությունը գործող օրենքին իրականացվում էր ՀՀ Ֆինանսների նախարարության համապատասխան ստորաբաժանման</p>	<p>Չի ընդունվել:</p> <p>Առաջարկը չի ընդունվել, քանի որ աուդիտորական կազմակերպությունները կարող են կնքել նաև շարունակական աուդիտի պայմանագրեր, որոնք կարող են ընդգրկել մի քանի հաշվետու ժամանակաշրջանների աուդիտ: Ինչ վերաբերում է ներկայումս աուդիտորական կազմակերպությունների նկատմամբ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից որակի հսկողության իրականացմանը, հայտնում ենք,</p>	Չի ընդունվել:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			կողմից:	որ նման հսկողություն շուրջ 1 տարի է չի իրականացվում, քանի որ տեսչական բարեփոխումների շրջանակներում համապատասխան տեսչությունը լուծարվել է:	
6	ՀՀ կառավարություն	30-րդ հոդված	Անցումային դրույթներում տարբեր կարգավորումներին առնչվող անցումային ժամկետները հետաձգել 1 տարով	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է, քանի որ անցումային դրույթներում ներկայումս նախատեսված ժամկետները սահմանվել էին նախորդ տարվա սեպտեմբերին, երբ ՀՀ կառավարությունը հավանության արժանացրեց օրենքների նախագծերի փաթեթը և ներկայացրեց ՀՀ ԱԺ քննարկման: Ներկայումս անհրաժեշտություն է առաջացել 1 տարով հետաձգել ժամկետները:	Ընդունվել է:
7	ՀՀ կառավարություն	30-րդ հոդված	Անցումային դրույթներում նախատեսել նոր մաս	Ընդունվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			ներկայումս ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավատարմագրված մասնագիտացված կառույցի կողմից տրամադրված աուդիտորների որակավորման վկայագրեր ունեցող անձանց համար առ այն, որ այդ վկայագրերը մինչև 2021 թվականի հունվարի 1-ը դիմելու դեպքում կփոխարինվեն այս օրենքի իմաստով աուդիտորի որակավորման վկայականով	Նախագիծը խմբագրվել է:	
8	ՀՀ Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողով	Նախագծի 30-րդ հոդվածի 1-ին մաս	Անցումային դրույթներում սահմանել նորմ, որով 2019թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված աուդիտորի գործող որակավորում ունեցող անձանց հնարավորություն կընձեռնվի մինչև 2023թ. հունվարի 1-ը պարզեցված կարգով անդամակցել մասնագիտացված կառույցին	Ընդունվել է:	Ընդունվել է:
9	ՀՀ կառավարություն	3-րդ հոդվածի	Կատարվել են տեխնիկական և	Ընդունվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
		1-ին մաս, 9-րդ հոդվածի 3-րդ մաս, 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր, 21-րդ հոդվածի 5-րդ մաս, 25-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ, 5-րդ և 7-րդ մասեր, 26-րդ հոդվածի 1-ին մաս, 27-րդ հոդվածի 2-րդ մաս,	խմբագրական բնույթի շտկումներ	Նախագիծը խմբագրվել է:	

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
		29-րդ հոդվածի 1-ին մաս, 30-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասեր			
<p>«Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին»</p> <p>ՀՀ օրենքի նախագիծ</p>					
1	ՀՀ կառավարություն	2-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի «ա» ենթակետ	Սահմանումներում որպես գործող աուդիտոր համարել վերջին 3 տարում ինչպես պարտադիր, այնպես էլ կամավոր աուդիտ իրականացրած անձին, այլ ոչ թե միայն պարտադիր աուդիտ իրականացրածին	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
2	ՀՀ կառավարություն	6-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ	ՀՎԽ լիազորություններում նախատեսել, որ ՀՎԽ-ն ոչ միայն հաստատում է որակի հսկողության արտաքին գնահատման ընթացակարգերը, այլև	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			ապահովում է դրանց մշակումը		
3	ՀՀ կառավարություն	6-րդ հոդվածի 3-րդ մասում	Կատարել խմբագրական բնույթի շտկում	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
4	ՀՀ կառավարություն	7-րդ հոդվածի 1-ին մաս	ՀՎԷՍ առաջին կազմի համար նախատեսել տարաժամկետ պաշտոնավարում՝ խուսափելու ՀՎԷՍ ամբողջ կազմի միաժամանակյա փոփոխությունից, իսկ հետագայում ՀՎԷՍ անդամները կնշանակվեն 5 տարի ժամկետով:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
5	ՀՀ ԱԺ պատգամավոր Արտակ Մանուկյան	16-րդ հոդվածի 3-րդ մաս	3-րդ մասում ավելացնել նոր 4-րդ կետ. «Մասնագիտացված կառույցի խորհրդի նախագահը, գործադիր տնօրենը և որակի վերահսկողության ապահովման արտաքին գնահատում իրականացնող անձինք չեն կարող լինել սույն նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի բ, գ, ե ենթակետերի պահանջները բավարարող գործող	Չի ընդունվել: Անկախության վտանգին առնչվող հարցերը, կարծում ենք, պետք է առավելապես դիտարկվի Հանրային վերահսկողության խորհրդի դեպքում: Այնուամենայնիվ կարծում ենք, որ առաջարկվող սահմանափակումը կարելի է	Չի ընդունվել:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			<p>աուդիտորները:»:</p> <p>Մասնագիտացված կառույցի անկախությունը, օբյեկտիվությունը և անաչառությունը ապահովելու նպատակով:</p>	<p>Նախատեսել գլխավորապես արտաքին գնահատում իրականացնող անձանց համար՝ ՀՎԽ կողմից հաստատվելիք արտաքին գնահատման ընթացակարգերով:</p>	
6	ՀՀ կառավարություն	22-րդ հոդվածի 4-րդ մաս	4-րդ մասում նախատեսել, որ ՀՎԽ-ն սահմանում է փորձագետ հաշվապահների, աուդիտորների և աուդիտորական կազմակերպությունների ռեեստրում ներառվող տվյալների նվազագույն ցանկը:	<p>Ընդունվել է:</p> <p>Փոփոխության առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ մասնագիտացված կառույցները կարող են ռեեստրում ներառել նաև լրացուցիչ տեղեկատվություն՝ ի լրումն ՀՎԽ կողմից սահմանված տեղեկատվության:</p>	Ընդունվել է:
7	ՀՀ կառավարություն	26-րդ հոդվածի 4-րդ մաս	Նախագծում հստակեցնել, որ մասնագիտացված կառույցի տարեկան գործունեության հաշվետվությունը հաստատվում է մասնագիտացված կառույցի կանոնադրությամբ սահմանված	<p>Ընդունվել է:</p> <p>Նախագիծը խմբագրվել է:</p>	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			մարմնի կողմից		
8	ՀՀ կառավարություն	27-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագծում հստակեցնել, որ մասնագիտացված կառույցի անդամավճարների չափերը հաստատվում են մասնագիտացված կառույցի կանոնադրությամբ սահմանված մարմնի կողմից	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
9	ՀՀ կառավարություն	35-րդ հոդված	Անցումային դրույթներում հետաձգել ՀՎԽ և մասնագիտացված կառույցների ձևավորման համար սահմանված ժամկետները	Ընդունվել է: Նպատակը ՀՎԽ և մասնագիտացված կառույցների ձևավորման առավել խելամիտ ժամկետների սահմանումն է:	Ընդունվել է:
10	ՀՀ կառավարություն	35-րդ հոդված	Անցումային դրույթներում նախատեսել նոր մաս ներկայումս ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավատարմագրված մասնագիտացված կառույցի անդամ հանդիսացող, սակայն հաշվապահի կամ աուդիտորի որակավորման վկայական չունեցող անձանց համար առ այն,	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
			որ նրանց մինչև 2023 թվականի հունվարի 1-ը կտրամադրվի փորձագետ հաշվապահի որակավորման վկայական, իսկ մինչև այդ վկայականի ժամկետը լրանալը, նրանք իրավունք կունենան պարզեցված կարգով ստանալ փորձագետ հաշվապահի որակավորման վկայական		
11	ՀՀ կառավարություն	36-րդ հոդված	Օրենքը ուժի մեջ մտնելու ամսաթիվ սահմանել 2020 թվականի հունվարի 1-ը	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
12	ՀՀ կառավարություն	2-րդ հոդվածի 1-ին մաս, 6-րդ հոդվածի 1-ին մաս, 2-րդ մաս, 4-րդ մաս և 5-րդ մաս,	Կատարվել են տեխնիկական և խմբագրական բնույթի շտկումներ	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
		7-րդ հոդվածի 3-րդ մաս, 18-րդ հոդվածի 6-րդ մաս, 20-րդ հոդվածի 6-րդ մաս, 22-րդ հոդվածի 6-րդ մաս և 7-րդ մաս, 26-րդ հոդվածի 1-ին մաս և 2-րդ մաս, 33-րդ հոդվածի 2-րդ մաս և 3-րդ մաս,			

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
		35-րդ հոդվածի 2-րդ մաս, 3-րդ մաս և 5-րդ մաս			
«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ					
1	ՀՀ կառավարություն	1-ին հոդված	Սահմանել, որ պարտադիր աուդիտի են ենթակա հաշվետու տարվա ընթացքում պետական կամ համայնքային միջոցներից տասը միլիոն և ավելի Հայաստանի Հանրապետության դրամի չափով ֆինանսավորված ՀԿ-ների ոչ թե ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը, այլ վերը նշված միջոցների օգտագործման վերաբերյալ հաշվետվությունները՝ որպես հատուկ նպատակի հաշվետվություններ	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: Գործող նախագծով առկա էր ՀԿ-ների ֆինանսական ծանրաբեռնվածության մեծացման ռիսկ, հետևաբար, առաջարկվել է պարտադիր աուդիտի պահանջ սահմանել միայն հանրային միջոցների օգտագործման վերաբերյալ հաշվետվության, այլ ոչ թե ՀԿ-ների ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթի նկատմամբ, որոնք ներառում են տեղեկատվություն ոչ	Ընդունվել է:

Հ/Հ	Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերվում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	2	3	4	5	6
				միայն հանրային, այլ և այլ միջոցների վերաբերյալ	
«Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ					
1	ՀՀ կառավարություն	նախագծում	Կատարվել են իրավական տեխնիկայի կանոնների հետ կապված շտկումներ	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է: